



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

7366

Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Յ. Կ. Կ. Կ.

Պրոբատորներ ըստ յերկրների, միայն

Կ. Կ. Կ. (Բ.)

14-րդ. ԿՈՆՖԵՐԵՆՏԻԱՅԻ  
ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

„ԿՈՍՏՈՒՆԻՍ“ ՎՍՏԱԳՐԻ ԱՅ Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

3K12

12-11

12 FEB 2014

7366

14 NOV 2009

23 SEP 2006

Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՁՈՂ

Ռ-11

Կր'  $\frac{300}{2516-ԲԱ}$

Ռ. Կ. Կ. (Բ.)

14-ՐԴ ԿՈՆՑԵՐՆՆՑԻԱՅԻ  
ԲԱՆԱԶԵՎ ԵՐԸ

5095  
12605

„ԿՈՄՈՒՆԻՍՏ“ ԱՄՍԱԳՐԻ № 1-Ի ՀԱՎԵԼՎԱԾ  
Բ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՌԿԿ (Բ) 14-ՐԴ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ  
ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

I. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ընթացիկ մոմենտի յուրորինակությունն այն է, վոր ինչպես միջազգային, այնպես ել ներքին պայմաններն եականապես փոխվում են: Այդ բեկումն իր ամենաշխավոր և ամենահիմնական գծերով հետևյալ փաստերին է հանգում. բացակայում է հեղափոխական վերելքը կենտրոնական Յեվրոպայում, մինչդեռ հեղափոխական շարժումը իմպերիալիզմի դեմ միաժամանակ է զարգանում գաղութներում և կախյալ յերկրներում և կապիտալիստական ռեժիմը վորոշ չափով և ժամանակավորապես կայունանում է. բավականաչափ արագ ելնթանում ՍԽՀՄ տնտեսական աճումը և ամրանում է խորհրդային իշխանությունը. փոխվել են հարաբերությունները ՍԽՀՄ և կապիտալիստական աշխարհի միջև, վորոնք արտահայտություն են գտել «ճանաչումների» մեջ. ՍԽՀՄ ներսում, տնտեսական աճման հիմքերի վրա, տեղի յե ունեցել նոր պրոցեսների զարգացում, վորոնք նոր դժվարություններ են ստեղծում բանվորա-գյուղացիական բլոկի ամրապլնդման համար:

2. Արևմուտքի խախուտացած կապիտալիզմը և Արևելքի զարգացող հեղափոխական շարժումը—մեր զարգացման այն ընդհանուր պայմաններն են, վորոնք մեր յերկրում արցիալիզմի շինարարության համար անհրաժեշտ արտաքին պայմաններ են ստեղծում: Սակայն այդ շինարարությունը կարող է հաջող լինել միայն այն չափով, ինչ չափով կուսակցությունն է ուղիղ կերպով հաշվի առնում

ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրտեսպար № 94դ. Գատ. № 4348. Տիրաժ 2000.

դասակարգային ուժերի փոխվող փոխհարաբերութիւններն ու, այդպիսով, նոր պայմաններում գյուղացիութիւնը ղեկավարելու կարողութիւնն է յերևան բերում:

3. Քաղաքացիական պատերազմը հաղթանակով վերջացավ, և մի շարք կապիտալիստական պետութիւններէ կողմից ՍՍՀՄ դե-յուրե ճանաչելու հետևանքով, արտաքին առևտրական հարաբերութիւններ հաստատվեցին, քաղաքի և գյուղի միջև աճեց ապրանքաշրջանառութիւնն, ու գների հարցը վճռական նշանակութիւն ստացավ. այս բոլորը միասին ստեղծեցին նոր փոխհարաբերութիւններ պրոլետարիատի ու գյուղացիութեան միջև և նոր հիմք՝ բանվորների ու գյուղացիների միութեան համար:

4. Կալվածատերերի հողերը գյուղացիութեան ձեռքն անցան և կալվածատիրական ստրկութիւնը վերացվեց. սրանք նվաճվեցին շնորհիվ հաղթանակող պրոլետարիատի ղեկավարութեան և նրա բլոկի՝ գյուղացիութեան հետ, սրանք առաջ բանվոր-գյուղացիական բլոկի հիմքն էին. սակայն, վորպես այդ բլոկի ամրացման միջոց, դրանք ներկայումս սկսում են անբավարար դառնալ: Նույնպես և պրոլետարիատի ու գյուղացիութեան միջև կնքված զինվորական դաշինքը, վորին հիմք էր ծառայում կալվածատիրոջից նվաճած հողի պաշտպանութիւնը, ներկայումս, տվյալ պայմաններում, այլևս չի խաղում այն դերը, վորպիսին նա խաղում էր քաղաքացիական պատերազմի ժամանակ:

5. Գյուղացիութիւնն արտաքին շուկայի հետ կապող խաղաղ առևտրական հարաբերութիւններն ու ՍՍՀՄ տնտեսական աճումը հայտնաբերում և մերկացնում են պրոլետարիատի և գյուղացիութեան շահերի միջև գոյութիւն ունեցող վորոշ հակասութիւններ, վորոնք ընթանում են գների (մեկ կողմից ինդուստրիայի արտադրանքի, մյուս կողմից գյուղատնտեսութեան արտադրանքի) համար մըղ-

վող պայքարի գծով: Սակայն այդ հակասութիւններն անհաշտելի չեն պրոլետարական պետութեան մեջ, յերբ ուղիղ կերպով են կիրառվում գների տնտեսական կարգավորման պետական ձեռնարկումները և յերբ պետութիւնն ամեն կերպ նպաստում է գյուղացիութեան վորջ հիմնական մասսայի գյուղատնտեսութեան վերականգման գործին:

6. Բայց այդ հակասութիւնները գյուղում նշանակելի չափերով սրվում են նաև ռազմական կոմունիզմի մնացորդների հետևանքով. ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական-վարչական պրակտիկայի ասպարիզում: Թագնված ագրարային գերբնակչութիւնը (аграрное перенаселение) և տնայնագործական արդյունաբերութիւնը տուրքի յենթարկելը. վորով այդ գերբնակչութիւնը սուր բնույթ է ստանում, վոր թե միայն անդրադառնում են ամբողջ տնտեսութեան և արտադրական ուժերի զարգացման վրա, այլև դժգոհութիւն են առաջ բերում գյուղի յերկու բեռներին մեջ, այսինքն կուլակային ունեվոր վերնախավի և չքավոր գյուղացիութեան վորոշ խավերի մեջ:

7. Գյուղացիական տնտեսութեանը զարգացման հետևում են նրա նպատակահարմարեցումը, վորին ամեն կերպ նպաստում է մեր կուսակցութիւնը: Այս և գյուղացիութեան արագորեն աճող կուլտուր-քաղաքական ակտիվութիւնը, հակասում են ռազմական կոմունիզմին նաև այն պատճառով, վոր այդ նպատակահարմարեցումը համապատասխան վարչական գործնական աշխատանք էլ է պահանջում. իսկ այդ աշխատանքը պետք է հիմնված լինի խրատագույն որինապահութեան վրա, վորովհետև այդ որինապահութիւնն է միայն, վոր արտադրողին հնարավորութիւն է տալիս վաղորոք հաշվի առնելու իր վճարելիք հարկերն ու պետական իշխանութեան այլ պահանջները:

8. Այսպիսի պայմաններում անհրաժեշտ է նոր հա-

բաբերությունները հիման վրա և այդ նոր ստեղծվող հա-  
բաբերություններից բղխող նոր մեթոդներով՝ ամրապնդել  
բանվորների և գյուղացիների դաշինքն ու պրոլետարիա-  
տի դիկտատուրան, վորն անկարելի յե պատկերացնել ա-  
ռանց այդ դաշինքի:

9. Տնտեսական քաղաքականության ասպարիզում ան-  
հրաժեշտ է կառուել չափ ազատել կաշկանդումները  
անտեսական շրջանառությունը անտեսության բոլոր ճյու-  
ղերում՝ ի միջի այլոց նաև գյուղում: Այս բանը պետք է  
տեղի ունենա, յեթե անտեսական բարձունքներն արդեն  
խակ պրոլետարիատի ձեռքին են և իրոք ամրացվում են:  
Կապիտալիզմի տարրերը, վորոնք մոտակա տարիների ըն-  
թացքում անխուսափելիորեն ուժեղանալու յեն, պետք է  
հաղթահարվեն անտեսական պայքարի միջոցով և գյուղա-  
ցիության հիմնական մասսայի կողպերացումով: Համեմա-  
տաբար արագացած ապրանքաշրջանառության հետևան-  
քով կաճի նաև կուտակման թափն ամբողջ ժողովրդական  
անտեսության մեջ ու կբարձրանա անտեսության սոցիա-  
լիստական տարրերի աստիճանաբար ուժեղացող բացար-  
ձակ և հարաբերական աճումը:

10. Քաղաքացիական ասպարիզում կուսակցու-  
թյան հիմնական դիրեկտիվը պետք է լինի՝ աշխուժացնել  
խորհուրդներն ու բարելավել գյուղացիության պրոլետա-  
րական ղեկավարութունն՝ իշխանության խորհրդային մար-  
մինների միջոցով և համարձակ ու վճռական կերպով հե-  
ղափոխական որինապահության գծին անցնելով ու վար-  
չական-քաղաքական աշխատանքի ասպարիզում ռազմակ հե-  
կոմունիզմի մնացորդներն արմատախիլ անելով:

Ներկա պայմաններում միայն այս ճանապարհով կա-  
րող ենք ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան:

11. Կուսակցության բոլոր անդամները պարտավոր-  
են հստակորեն ըմբռնել այսպիսի կուսակցական ընթաց-

քի (կուրսի) անվիճելի անհրաժեշտությունը: Կուսակցու-  
թյան յուրաքանչյուր անդամի, յուրաքանչյուր տեղային  
կազմակերպության, յուրաքանչյուր պատասխանատու կու-  
սակցական աշխատողի աշխատանքը պետք է չափել նրա-  
նով, թե վորպիսի հմտությամբ է անցնում նա այդ գծին,  
վորը պրոլետարական քաղաքականության միակ ուղիդ  
գիծն է ներկա պայմաններում:

1. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԱՅՊ  
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մեր կուսակցության ուշադրության կենտրոնում այժմ  
կանգնած են գյուղի նկատմամբ պրոլետարիատի ուղիդ ղե-  
կավարություն կիրառելու խնդիրները: Պրոլետարիատի  
ղեկավարությունը գյուղացիության նկատմամբ պրոլետա-  
րական հեղափոխության հաղթանակից հետո կայանում է  
թե պրոլետարական պետության հիմքերն (ամենից առաջ  
անտեսական հիմքերն) ամրացնելու կողմն ուղղված ընդ-  
հանուր ուղիդ քաղաքական գիծ տանելու և թե պրոլետա-  
րական հեղափոխության յուրաքանչյուր տվյալ շրջանում  
այդ քաղաքական գծի կիրառման կոնկրետ միջոցներ ու  
հնարներ ստեղծելու մեջ: Պրոլետարիատի դիկտատուրայի  
իրականացման շրջանում այդ ղեկավարությունն անհրա-  
ժեշտ է, վորպես մի ոգնություն, վոր ցույց է տալիս պրո-  
լետարական պետությունն աշխատավորների ավելի հե-  
տամնաց և պակաս կազմակերպված մասսա ներկայացնող  
գյուղացիությանը, նրա անտեսական, կուլտուրական և  
քաղաքական աճման գործում: Բայց յերբ բանվորների  
հետ միասին նաև գյուղացիությունն աստիճանաբար լծվի  
պրոլետարական պետության վողջ շինարարությանը և միև-  
նույն ժամանակ անպայման կիրառվի պրոլետարական ղե-  
կավարությունը, միայն այդ ժամանակ կապահովվի ինչ-  
պես պրոլետարիական հանրապետության զարգացումն, այն-

պես ել ամենալայն գյուղացիական մասսաների հետզհետե ավելի մոտիկ և իրական հաղորդակցութիւնը փոշխորհրդային շինարարութեան և դրանով նաև սոցիալիզմին. իսկ առանց այդ հաղորդակցութեան անկարելի կլինի սոցիալիզմի վերջնական հաղթանակը:

Ներկա շրջանում (յերբ գոյութիւն ունի հեղափոխութեան բովում փորձված կուսակցական ընդհանուր վարքագիծ և կիրառվում են գյուղի տնտեսական դրութեան բարելավման հասունացած ձեռնարկումները) կարեւորագույն նշանակութիւն ունի պրոլետարական ղեկավարութեան հարցը, հետևապես նաև գյուղացիութիւնը սոցիալիստական շինարարութեանը հաղորդակից անելու հարցը:

Այժմյան պայմաններում բացառիկ մեծ նշանակութիւն ունի խորհուրդների, կոոպերացիայի, արհեստակցական միութիւնների և գործնական շինարարութեան բընույթ կրող այլ կազմակերպութիւնների աշխատանքի ծավալումը և բանվորական ու գյուղացիական մասսաներին ավելի մեծ չափերով դեպի այդ կազմակերպութիւններին աշխատանքը գրավելը: Բացի այդ, վճռականապես պետք է վերացնել նրանց աշխատանքին և նրանց ընտրովի մարմինների աշխատանքին սխալ կերպով միջամտելու (նշանակովիութեան, այսպես կոչված «հրամայելով դեկավարելու» և այլն) սովորութիւնը: Այս պահանջով, ներկա Երզնում, գյուղի պրոլետարական ղեկավարութեան հիմնական մեթոդներ պետք է հանդիսանան հետևյալ ձեռնարկումները.

Ա.) Աշխուժացնել խորհուրդները (իսկ դրան գուզընթաց նաև կոոպերացիան, գյուղի փոքրկոմիտեները և այլն), կուսակցութեան լավագույն գյուղական ուժերին ուղիղ կերպով և սխտեմատիկաբար դեպի խորհուրդների (և կոոպերացիայի) աշխատանք քաշելով, քաղաքից պատրաստված աշխատողներ ուղարկելու միջոցով նրանց ամեն էրպէ

զորեղացնելով, ինչպես և խորհուրդային մարմիններին ու կոոպերատիվներին աշխատողների կազմը բարելավելու աշխատանքին իրոք զարկ տալով և դրան գուզընթաց խորհուրդներում ու նրանց գործկոմիտեներում, կոոպերատիվներում և (գյուղի, գավառի, նահանգի, հանրապետութեան) այլ մարմիններում անկուսակցական գյուղացիներին ու գեղջկուհիներին լայն չափերով դեպի պատասխանատու աշխատանք քաշելով:

Բ.) Գլխավորապես գյուղացիական մեր յերկրի պայմաններին հարմար, ձկուն ու միաժամանակ պլանային պետական-տնտեսական ճանապարհով կարգավորել տնտեսական կյանքը (որինակ արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքների գների նկատմամբ). պետական ոգնութեան բոլոր միջոցներով և արդյունաբերական ու առևտրական մարմինների աշխատանքով նպաստել գյուղացիների բարձրացմանը և, մանավանդ, տնտեսական միավորմանը՝ կոոպերացիան ծավալման միջոցով, փորը (կոոպերացումը) պետական վարկին միացած՝ հիմնական պայմանն է գյուղացիական մասսաներին աստիճանաբար սոցիալիստական շինարարութեանը հաղորդակից անելու և պրոլետարական ղեկավարութիւնը գյուղում կիրառելու համար:

Գ.) Կիրառել որենսպրական և հարկային միջոցներ, ինչպես և համապատասխան ձեռնարկումներ տեղերում, վորոնց նպատակը պետք է լինի պաշտպանել գյուղատնտեսական պրոլետարիատի և չքավոր գյուղացիութեան շահերը, խտրով պահպանելով հեղափոխական որինապահութիւնը:

Դ.) Ծավալել կուլտուրական շինարարութիւնը գյուղում (դպրոցներ, գրադարաններ, խրճիթ-ընթերցարաններ և այլն), ուղիղ և լիակատար կերպով ոգտագործելով գոյութիւն ունեցող ուժերն, ասպահովելով գյուղական ին-

տեղի գեներալի (ուսուցիչներ, գյուղատնտեսներ, բժիշկներ և այլն), նոր խորհրդային կազմերի իրոք լայն չափերով աճելը և անվերջ ամրացնելով բատրակների ու այլ գյուղական աշխատավորների արհեստակցական կազմակերպությունները:

Յե) Քաղաքական դաստիարակությունը կատարել գյուղում իրոք մասսայական տպագիր ու բանավոր պրոպագանդա ու ազիտացիա ծավալելու միջոցով, այսինքն տարածել զրբեր ու լրագրեր, այդ գործին կարելու չափ ու ժեղ մասնակցության կանչելով գյուղի թղթակիցներին և գյուղացիական գրողներին (մանավանդ անհրաժեշտ է ամենագործոն ոժանդակությունը ցույց տալ գյուղի թղթակցային շարժմանը, վորը ներկա մոմենտում կուսակցության կարևորագույն ոգնականն է խորհրդային, կոոպերատիվ և այլ մարմինների պակասությունների ու չարարկումների դեմ մղվող պայքարում, ինչպես և կուսակցական, խորհրդային և այլ որգանների գործնական աշխատանքի բարելավման խնդրում)։ սխտեմատիկ կերպով լրացնել գյուղի աշխատողների շարքերը պատրաստված պրոպագանդիստներով, ազիտատորներով և այլն:

Զ) Բատրակներին, չքավոր գյուղացիներին և միջակների լավագույն հեղափոխական մասին ավելի մեծ չափերով ներգրավել մեր կուսակցական կազմակերպությունների շարքերը, ինչպես և ծավալել գյուղում կոմյունիստիկության պիոներների կազմակերպությունների, գեղջկուհիների ներկայացուցչական ժողովների աշխատանքը և այլն:

Գյուղի ղեկավարության այս բոլոր մեթոդներն ուղիղ գործադրելով, գյուղացիության պրոլետարական ղեկավարության այս բոլոր լծակներին հենվելով է միայն, ովք բանավոր դասակարգը, կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվելով, կը կարողան սխտեմատիկ

կերպով ամրացնել գյուղացիության վստահությունը դեպի պրոլետարիատի ղեկատուներն, իսկ զբանով կաճի ու կամրանա բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ՝ հանուն սոցիալիզմի հաղթանակի:

Յերբեք չի կարելի թագցնել, վոր գյուղացիության նկատմամբ պրոլետարական ղեկավարությունը միայն այն ժամանակ կլինի խորհրդային հեղափոխության ամենահետևողական և վճռական դասակարգ պրոլետարիատի իսկական ղեկավարություն, յերբ այդ ղեկավարությանն ուղղություն կտա կոմունիստական կուսակցությունն, իսկական արտահայտիչն այդ ամբողջ դասակարգի հիմնական ու իսկական շահերի և, միևնույն ժամանակ գյուղի ու քաղաքի բոլոր աշխատավորների շահերի՝ այն պայքարում, վոր նրանք մղում են միահամուռ ուժերով, մեր յերկիրն իրոք առաջավոր սոցիալիստական հանրապետություն դարձնելու համար:

Վորպես պրոլետարիատի ավանգարդ ու առաջնորդ, կոմունիստական կուսակցությունը պետք է միշտ բանվորական ու գյուղացիական մասսաների գլուխն անցած լինի, — ել չենք խոսում ընդհանուր քաղաքական գծի մասին, — նախաձեռնողի ու գլխավոր կազմակերպիչի դեր ստանձնելով հեղափոխական պրոլետարական ամբողջ գործնական շինարարության մեջ և հետզհետե բանվորական ու գյուղացիական մասսաներ ավելի գրավելով դեպի այդ աշխատանքը: Սա վերաբերվում է խորհրդային Հանրապետության տնտեսական, կուլտուրական, արհեստակցական և քաղաքական շինարարության բոլոր ասպարեզներին, հետևապես նաև խորհրդային, կոպերատիվ և այլ մարմինների թերությունների ու սխալների շտկման գործին, ինչպես և այդ մարմինների աշխատանքի մեջ բացահայտ կերպով տեղի ունեցող ու տակավին վոչ սակավաթիվ չարարկումների դեմ մղվող պայքարին:

Այնուհետև այս բանը հատուկ պահանջներ ե առաջադրում ինչպես կուսակցութեան կազմին ու կազմակերպութեանն, այնպես ել կոմունիստական կազմակերպութեանն ե կուսակցութեանը հարող կազմակերպութեանների կազմին ու կազմակերպութեանն, այսինքն՝ կոմյետիտմիութեանն ու պատանի պիոներների կազմակերպութեանը, բանվորուհիների ե գեղջկուհիների կազմակերպութեանը, բանվորողիթակցային շարժմանը ե այլն: Վերջապես դա, մանավանդ ներկա պայմաններում, գնալով ավելի ու ավելի մեծ պահանջներ ե առաջադրում ինչպես անմիջական կուսակցական գծով ընթացող ղեկավարութեան բարելավման խնդրում, այսինքն՝ այն դեպքում, յերբ բարձրագույն կուսակցական մարմինները ղեկավարութեան են ցույց տալիս ստորին կուսակազմակերպութեաններին, այնպես ել կուսակցութեան կողմից խորհուրդներին, արհմիութեաններին, կոոպերացիային ե այլ վոչ-կուսակցական կազմակերպութեաններին ցույց տրվող ղեկավարութեան գործում: Այս ամենից պարզվում ե, վոր անհրաժեշտ ե, մանավանդ ներկա պայմաններում, ամեն կերպ լավացնել կուսակցական աշխատանքի վորակը ե, առաջին հերթին, կուսակցական ղեկավարութեան վորակը:

Այս բոլոր միջոցները մանավանդ անհրաժեշտ ե գործադրել ներկայումս գյուղի նկատմամբ ե, հետևապես, առաջին հերթին մեր ստորին գյուղական կազմակերպութեանների նկատմամբ: Այստեղ (գյուղում) ե գտնվում ներկայումս մեր կուսակցութեան համար հատուկ դժվարութեան ներկայացնող խնդիրը, քանի վոր այստեղ ավելի թույլ ե քաղաքականապես պակաս պատրաստված են մեր կազմակերպութեաններն ու կուսակցական աշխատողները ե քանի վոր ներկա պայմաններում այստեղ անպարման անհրաժեշտ ե վճռական փոխփոխութեաններ մտցնել խորհուրդներին, կոոպերացիային, գյուղփոխտղիմներին ե գյուղ-

ղի այլ վոչ-կուսակցական կազմակերպութեանների կուսակցական ղեկավարութեան մեթոդների մեջ՝ վերը ցույց տված ուղղութեամբ:

Այստեղից բխում ե այն, վոր վողջ կուսակցութեանն անհրաժեշտաբար պետք ե առանձնապես լուրջ ե ուշադիր վերսբերվումք ցույց տա մեր գյուղական կուսակցական կազմակերպութեանների աշխատանքը բարելավելու ե մեր գյուղական կուսակազմակերպութեանների քաղաքական դաստիարակութեանն ու ժեղացնելու ե նրանց (կազմակերպութեաններին) կազմը լավացնելու ու թարմացնելու գործին:

Մրան գուզընթաց անհրաժեշտ ե ավելի մեծ ուշադրութեան դարձնել կուսակցական կազմակերպութեանների, խորհուրդների ե արհեստակցական միութեանների աշխատանքի վրա արդյունաբերական շրջաններում, աշխատելով այնպես անել, վոր այստեղ ես պահպանվի համապատասխան մարմինների ընտրովիութեանը (թույլ չտալ, վոր տեղի ունենան նշանակովիութեան ե ընտրողներին վզին թեկնածուներ փաթաթելու դեպքեր ե այն): Միևնույն ժամանակ անհրաժեշտ ե կուսակցութեան կուսակցական - դաստիարակչական ե կազմակերպչական աշխատանքն ավելի ծավալել, ինչպես ե բանվորներին ավելի մեծ չափերով ներգրավել դեպի խորհրդային շինարարութեան ե մասնավորապես, դեպի արտադրութեան կազմակերպման բարելավման ու աշխատանքի արտադրականութեան բարձրացման աշխատանքը: Ընդամին պետք ե ավելի մեծ ուշադրութեան դարձնել ստորին կուսակցական կազմակերպութեանների աշխատանքին՝ գործարաններում ու ֆաբրիկաներում ե առաջին հերթին, ավելի ես ու ժեղացնել ուշադրութեանը դեպի խոշոր ձեռնարկների համբարական բջիջների աշխատանքը:

Այս ամենից յեղնելով, ընդունել, վոր կուսակցական ղեկավարութեան կարևորագույն խնդիրները ներկայումս հետևյալներն են.

Խոստովանողների, կոպերացիայի, արհեստակցական միությունների յեվ պոլիտեխնիկական հասարակացուքայան կազմակերպությունների գործունեության ասպարհուում:

1. Շարունակել խորհուրդների աշխուժացման միջոցների կիրառումը, վորոնք հիմնականում նախագծված են կենտկոմի հոկտեմբերյան պլենումում և համակուսակցական ու խորհրդային մարմինների վորոշումների մեջ: Ընդ սմին հատուկ ուշադրութուն դարձնել խորհուրդների կազմակերպման և աշխուժացման խնդիրների վրա ծայրագավառներում ազգային հանրապետութունների ու շրջանների մեջ:

2. Վերականգնել և հաստատուն հիմքերի վրա դնել խորհուրդների արհմիութունների, կոպերացիայի և այլ մարմինների կոմունիստական ֆրակցիաների աշխատանքն, այդ ֆրակցիաները համարելով որգաններ, վորոնք պարտավոր են կիրառել կուսակցական ղեկավարութունն այդ կազմակերպութունների նկատմամբ. սակայն պետք է այնպես վարվել, վոր հիշյալ ֆրակցիաները յերբեք չփոխարինեն խորհուրդների (կոպերացիայի և այլն) համապատասխան մարմիններին: Ամեն կերպ պետք է նպաստել անկուսակցական բանվորներին, գյուղացիներին և առհասարակ խորհրդային իշխանութունը նվիրված անկուսակցական աշխատողներին այդ մարմինների աշխատանքին և մասնավորապես, ընտրովի մարմինների աշխատանքին յծելու գործին:

Այս պատճառով անհրաժեշտ է, վոր կենտկոմը լրացուցիչ ցուցումներ մշակե արտակուսակցական կազմակերպութուններում ներկա պայմաններում կոմունիստական ֆրակցիաների կատարելիք աշխատանքների մասին:

3. խորհրդային մարմինների կուսակցական ղեկավարության ավելի ճկունութուն ու սիստեմականութուն հաղորդելու նպատակով, անհրաժեշտ է (ընտրողականության սկզբունքն անխախտ պահպանելու պայմանով) ու-

ժեղացնել ղեկավար կուսակցական և խորհրդային մարմինների անձնական պերսոնալի կապն, որին նահանգական կոսիտեյի բյուրոյի քարտուղարին և մի քանի անդամներին նահանգական գործկոմի նախագահության մեջ մտցնելով, նախագահական գործկոմի նախագահին նահանգական կոմիտեյի բյուրոյի կազմի մեջ մտցնելով, նույն անելով նաև գավառներում և այլն:

4. Արհմիութունների աշխատանքի ղեկավարության ժամանակ յերակետ ընդունել Համաիութենական Արհմիութնի միութենական համագումարների վորոշումները, գործնական աշխատանքի ասպարիզից դուրս քշելով գրծծիրեն միջամտելու և խնամակալելու առանձին դեպքերը:

Ի լրացում այս բանի, անհրաժեշտ է համարվում կենտկոմի կողմից կուսամարմինների և արհմիութունների փոխհարաբերութունների մասին ավելի մանրամասն ցուցումներ տալ:

5. Առանձնապես մեծ նշանակութուն տալով աշխատանքի արտագրականության բարձրացման և արդյունագործության կազմակերպման ասպարեզում կազմակերպության ու աշխատանքի ուղիղ կարգ սահմանելու համար արտագրական խորհրդակցութունների կատարած աշխատանքին, անհրաժեշտ է համարվում, վոր այդ խորհրդակցութունները, խմբակներն ու կոնֆերենցիաները (տընտեսական տրեստներում) կազմակերպեն արհմիութունները, տնտեսական մարմինների հետ համաձայնության գալով. իսկ կուսակցական կազմակերպութունները պարտավոր են նպաստել դրան և իրենց վրա վերցնել ընդհանուր ղեկավարութունը:

6. Նորից մատնանշել բանվորական ակումբների աշխատանքի հսկայական նշանակութունը. նպատակահարմար համարել, վոր նրանք գոյութուն ունենան արհմիութունների և նրանց որգաններին կից, գտնվելով կուսակցա-

կան կազմակերպությունների գաղափարական ղեկավարության տակ, ակումբների աշխատանքին ամենամոտիկ մասնակցությունը պետք է ունենան Լուսժողովատի քաղլուսմարմինները:

7. Անհրաժեշտ է բացառիկ մեծ ուշադրություն դարձնել բանգյուղթղթակցային շարժման վրա: Այդ գործի լիակատար կուսակցական ղեկավարությունը պահպանելով, այնուամենայնիվ նպատակահարմար համարել, վոր այդ կազմակերպություններն ամենից առաջ ստեղծվին համապատասխան բանվորական և գյուղացիական թերթերին ու ժուրնալներին կից. ընդամին ուսել միջոցներ ձեռք առնել բարելավելու դրանց խմբագրական կազմը: Դրան զուգընթաց, ավելի մեծ ուշադրություն դարձնել պատիւրագրերի ղեկավարությանը, վորոնք արդեն հսկայական նշանակություն են ստացել:

8. Արձանագրելով պրոլետարական հասարակայնության աճման փաստը, դրա հետ միասին նաև գանազան կամավոր կազմակերպությունների թվի ավելանալն, ընդգծել, վոր անհրաժեշտ է, վորպեսզի նրանք սերտորեն կապվեն խորհուրդների և համապատասխան խորհրդային մարմինների վողջ աշխատանքի հետ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է վճառականորեն պայքարել այդ կազմակերպությունների համար ամեն տեսակի հարկադրական և կիսահարկադրական միջոցներով անդամներ (գյուղացի, բանվոր և ծառայող՝ թե կուսակցական, թե անկուսակցական) ճարելու դեմ:

9. Գյուղում (ինչպես և գավառում ու նահանգում, գոնե այն աշխատողների նկատմամբ, վորոնք իրենց աշխատանքով պետք է վոր ավելի կապված լինեն գյուղի հետ) կուսակցական ղեկավարությունն ուղիղ հիմքերի վրա դնելու կարևորագույն պայմաններից մեկն էլ ներկա մոմենտում այն է, վոր պետք է պերսոնալ մշտական կապ

հաստատել համեմատաբար գործոն անկուսակցական գյուղացիների հետ, ինչպես և նպատակ նրանց (առաջագեծ գյուղացիներին) քաղաքական զարգացմանը, հասարակական աշխատանքի լծելու գործին և այլն:

10. Տեղային կուսակցական կազմակերպությունները պարտավոր են կարելույն չափ մոտիկ կերպով մասնակցել յերկրային գործառնների աշխատանքին ու կյանքին վողթե միայն նրանց փոփոխական կազմը գորակոչելու ժամանակ. այլև մեկ գորակոչից մինչև մյուս գորակոչը տեղի ժամանակամիջոցներում:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել տեղային վարժակայանների, գյուղի զինվորա-քաղաքական աշխատանքի այդ կենտրոնների կազմակերպման ու կահավորման վրա, ինչպես և նրանց աշխատողների ընտրության վրա: Տեղային կազմակերպությունները պետք է ապահովեն կուսակցականների ժամանակին գորակոչի ներկայանալու և այդ գործին լիովին անձնատրվելու հնարավորությունը:

11. Շարունակել ինչպես կուսակցական, այնպես էլ անկուսակցական բանվորների և բանվորուհիների, գյուղացիների և գեղջկուհիների առաջ քաշելը՝ խորհուրդներում, տնտեսական մարմիններում, արհմիություններում և կոոպերացիայում աշխատելու համար. առաջ քաշվող աշխատողներին տալ համապատասխան նախնական պատրաստություն այն աշխատանքի համար, վորին նրանք կանչվելու յեն: Մասնավորապես մասնանշել, վոր ազգային փոքրամասնություններին պատկանող բանվորներից ու գյուղացիներից բավարար թվով նոր աշխատողներ առաջ չեն քաշվում:

12. Կուսակցական ուժերի բաշխման գործին, վոր վողջ-կուսակցական կազմակերպությունների ու հիմնարկների կուսակցական ղեկավարության կարեւորագույն

կողմն ե, առաջիկայում ևս անհրաժեշտ է առավելագուցն ուշադրութիւնն նվիրել, ընդամին ղեկավար կուսակցական ուժերին դեպի խորհրդային, տնտեսական, կոոպերատիվ, արհմիութենական և այլ աշխատանքների հիմնական հանգուցակետեր ուղարկելը նպատակ դնելով:

Միևնուց ժամանակ վերջնականապես դադարեցնել աշխատողներին հաճախակի կերպով մեկ աշխատանքից մյուս աշխատանքի փոխադրելը, վորը խախտում է ընտրողականութեան սկզբունքը և բավական չափ հնարավորութիւն: չի տալիս նրանց ծանոթանալու տեղական բանվորական ու գյուղացիական մասսաների պահանջներին: Այս բանը նկատի առնելով, կուսակցական կոմիտեները պարտավոր են ավելի ճշգրիտ վորոշել, թե պետական և զանազան տնտեսական ապարատներում, վոր հիմնական պոստերը պետք է ամենից ավելի ապահովված լինեն լավագուցն կուսակցական ուժերով:

13. Ներկա շրջանի կարևորագուցն խնդիրն է— ուժեղացնել և լավացնել խորհրդային շինարարութեան և մանավանդ տնտեսական աշխատանքի, մանկավարժութեան ու կոոպերացիայի բոլոր ասպարեզների համար մասնագետ-աշխատողների (ի՛նչպես կուսակցական, այնպես էլ անկուսակցական) կադրերի պատրաստումն ու վերապարաստումը: Ընդամին ավելի ուղիղ հաշվառման պիտի յենթարկել, թե՛ գյուղը քանի կոոպերատորի, ուսուցչի, հողաշինարարի, գյուղատնտեսի և բուժական պերսոնալի կարիք ունի: Մասնավորապես անհրաժեշտ է համարվում ուժեղացնել գյուղական աշխատանքի զանազան ասպարեզների պրակտիկ-աշխատողների պատրաստումն ու վերապատրաստումը՝ մանավանդ ազգային հանրապետութիւններում և շրջաններում:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Կուսակցական մասսաների և կուսակցութեանը հարող պրոլետարական խավերի գաղափարական-բոլշևիկական դաստիարակութեան աշխատանքն ուժեղացնելու նպատակով՝ շարունակել բարգաւաճիչ պրոպագանդան մանր-բուրժուական թեքումների (մասնավորապես տրոցկիզմի) քաղաքական վնասակարութեան ու վտանգավորութեան մասին, միաժամանակ քննադատելով լենինիզմի եյութեան հասարակացրած (упрощенное) շարադրութիւնը: Հատուկ ուշադրութիւն դարձնել մամուլի (մասնավորապես գյուղացիական մամուլի) և հրատարակչութիւնների աշխատանքի կուսակցական ղեկավարութեան վրա:

2. Ընդունել, վոր իբրև «Պրավդայի» լրացում մարտական ղեկավար կուսակցական որգանի («Բոլշևիկ» ժուրնալի) ստեղծման գաղափարը լիովին արդարացրեց իրեն, և կուսակցութիւնը պարտավոր է ամեն կերպ նպաստել «բոլշևիկ»-ին, վորպես լենինիզմի հաստատամիտ ղեկավար որգանի հետագա ամրապնդմանը: Պետք է ստեղծել նաև կոմյերիտիութեան ղեկավար որգան — կոմյերիտական կադրերի համար: «Դերեվենսկի կոմունիստ» ժուրնալը պետք է համապատասխան որգան դառնա գյուղի կուսակցական կադրերի համար, վորոնք լայնորեն պիտի աշխատակցեն այդ ժուրնալին: Բացի այդ, նպատակահարմար համարել «Բոլշևիկ» ժուրնալին կից, անհրաժեշտութեան դեպքում, կուսակցութեան աշխատանքի կարևորագուցն հարցերին նվիրված դիսկուսիոն ժողովածուների հրատարակումը:

3. Դեպի կուսակցութեան բոլոր տեսակի աշխատանքները զրավել առավելագուցն թվով կուսակցութեան անդամներ ու թեկնածուներ և կուսակցական կարգապահութեան ամրապնդման գուզնիթաց, վորն անհրաժեշտ է մա-

նավանդ այժմ, յերբ կուսակցության մեջ նշանակելի թվով նոր անդամներ են ընդունվել, խստիվ պահպանել կուսակցական մարմինների ընտրողականության կարգը, վճռականապես պայքարելով բյուրոկրատիզմի արտահայտությունների դեմ կուսակցական աշխատանքի ասպարիզում, կուսակցական մարմինների առողջ ըննադատության վերացման փորձերի դեմ և առհասարակ ներկուսակցական գեմոկրատիայի մեթոդների խախտման դեմ:

4. Կուսակցական ղեկավար մարմինների կարևորագույն գործը համարել ընդունված կուսակցական վորուշումների կատարման ստուգումը, վորը պետք է կատարվի ի հաշիվ չափազանց մեծ թիվ կազմող նոր պլանների ու ղեկարացիոն վորուշումների:

5. Մեծագույն ուշադրությունը նվիրել ստորին կուսակցական կազմակերպությունների անմիջական կենդանի ղեկավարությանը: Այդ բանը կատարել տեղերը մեկնելու, հրահանգչական սպարատր լավ կազմակերպելու, մամուլի աշխատանքն ավելի լավ հիմքերի վրա դնելու և այլ միջոցներով: Միաժամանակ, ինչպես հենտկոմը, այնպես էլ տեղական կոմիտեները, պարտավոր են միջոցներ ձեռք առնել ու հիմնավորապես կրճատել ձևական հաշվետվությունը, իսկական կրճատման յենթարկել տեղերն ուղարկվող շրջաբերականների ու լեզիանների քանակը և կրճատել գրավոր ինֆորմացիա, վիճակագրություն և այլն ներկայացնելու պահանջը:

6. Համապատասխան կազմակերպությունների ու հիմնարկների աշխատանքի համար ավելի մեծ պատասխանատվություն դնել ինչպես այդ հիմնարկների ղեկավար մարմինների, այնպես էլ այն անհատ կոմունիստների վրա, վորոնք այնտեղ աշխատում են, վերացնելով ավելորդ հանձնաժողովները, պակասեցնելով և իրոք անհրաժեշտ քանակի հասցնելով նիստերի թիվն ու վոչ մի դեպքում

թույլ չտալով, վոր կուսակցական կոմիտեյի ղեկավարությունը փոխարինվի այս կամ այն մշտական կուսակցական հանձնաժողովի ու խորհրդակցության ղեկավարությամբ:

7. Չեռք առնել վճռական միջոցներ առանձին ընկերներին աշխատանքով չափից դուրս ծանրաբեռնելու և միաժամանակ մի քանի պաշտոն վարելու դեմ, համապատասխան ձևով առաջ քաշելով նոր աշխատողներ, մանավանդ բանվորների և գյուղացիների շարքերից: Կուսակցության շարքային անդամների նկատմամբ կենսագործել այն վորուշումը: վոր նրանք շաբաթվա մեջ պետք է ունենան վոչ պակաս, քան յերկու ազատ յերեկո և, բացի այդ՝ միանգամայն ազատ մի օր:

8. Բանվորական շրջաններում հատուկ ուշադրություն դարձնել համքարական բլիշների և ստորին կուսկազմակերպությունների ղեկավարության վրա՝ ֆարբիկաներում և գործարաններում, նրանց աշխատանքը կապելով ամբողջ ձեռնարկի բլիշի կուսակցական աշխատանքի հետ: Անհրաժեշտ համարել, վոր հենտկոմը լրացուցիչ ցուցումներ տա համքարական բլիշների աշխատանքների մասին, նրանց վերջին տարվա աշխատանքի փորձը նկատի առնելով:

9. Արձանագրելով, վոր խորհրդային և բարձրագույն դպրոցների բլիշների աշխատանքի բարձրացման համար կուսակցական կազմակերպությունների արածը դեռ ևս հեռու յե բավարար լինելուց, պարտավորեցնել տեղական կուսակցական կոմիտեներին, վոր այդ գործին ավելի մեծ ուշադրություն նվիրեն, ընդամին նկատի առնելով այն, վոր խորհուրդների աշխուժացման խնդիրների հետևանքով աճում է այդ կազմակերպությունների աշխատանքի կարևորությունը:

10. Բոլոր կուսակցական կազմակերպությունները

պարտավոր են ավելի ուշագրություն դարձնել բանվորուհիներին և գեղջկուհիներին ներկայացուցչական ժողովներին աշխատանքի վրա, մանավանդ նկատի ունենալով այն հանգամանքը, վոր խորհուրդներում, կոոպերատիվներում, արհմիություններում և այլ կազմակերպություններում պետք է ավելի մեծ թվով բանվորուհիներ ու գեղջկուհիներ քաշել դեպի պատասխանատու պոստերը՝ միևնույն ժամանակ պետք է հիշել, վոր սա վոչ թե միայն բանվորուհիների ու գեղջկուհիների բաժինների գործն է, այլ և ամբողջ կուսակցութայն:

11. Ընդունելով, վոր կազմակերպությունների համակուսակցական ստուգումներն ու զտումները բացառիկ միջոցներ են, առաջիկայում անհրաժեշտ է ավելի մեծ ուշագրություն դարձնել կուսակցորեն անհաստատամիտ, քայքայված և կուսակցությունը վարկաբեկող տարրերից կազմակերպություններն ամենորյա և սխտեմատիկ աշխատանքով մաքրելու խնդրի վրա:

12. Հավանություն հայտնել կենտկոմի և ԿՎՀ վորոշմանն այն միջոցների մասին, վորոնցով ուժեղացվում է կոմունիստների ուսուցանողական առաջնությունը՝ այն զանցանքների համար, վոր կատարում են նրանք խորհրդային կամ այլ հասարակական աշխատանքի ասպարիզում:

## II. Կուսակցության գյուղական կազմակերպությունների ամրացման միջոցները

Կուսակցության աշխատանքը գյուղում կարելի չէ լավացնել միայն այն դեպքում, յեթե ամրացվի կուսակցության գյուղական կազմակերպությունների կազմը, ուժեղացվի սրանց աշխատանքը, լրջորեն բարելավվի դեկավարությունը և առհասարակ ուժեղացվի վողջ կուսակցության ոգնությունը՝ գյուղական կազմակերպություններին: Այս ամենն առանձնապես անհրաժեշտ է անել ներ-

կայումս հետևյալ պատճառներով. կուսակցական կազմակերպությունները գյուղում դեռ ևս ծայր աստիճան թույլ են, այդ կազմակերպությունների կազմը վերջին տարիների ընթացքում քիչ է թարմացվել և վորոշ դեպքերում վորոշ զտման է կարոտ, ներկա պայմաններում առաջվանից ավելի քաղաքական և գործնական պատրաստություն է պահանջվում:

Այս ամենից յեղնելով, անհրաժեշտ է համարվում կուսակցության գյուղական կազմակերպությունների ամրացման համար ձեռք առնել հետևյալ միջոցները.

1. Լրացնել և թարմացնել կուսակցության գյուղական կազմակերպությունների կազմը, սակավազոր գյուղացիութայն առաջադեմ — հեղափոխական տարրերին (մասնավորապես ներկայացուցչական ժողովների շկուան անցած գեղջկուհիներին), ինչպես և բարակներին ու միջակ գյուղացիներին լավագույն մասին դեպի կուսակցություն զրավելու աշխատանքն՝ ավելի յեռանդուն դարձնելով:

2. Գյուղի կուսակցական կազմակերպությունների ամրացման համար, առանձնապես մեծ նշանակություն պետք է ունենա կոմյերիտական գյուղական ակտիվի քաղաքական դաստիարակութայն և գործնական պատրաստման ուժեղացումը և այդ ակտիվի քաղաքականապես պատրաստված մասն ամբողջապես դեպի կուսակցություն զրավելու համար ձեռք առնվող իրական միջոցները:

3. Միաժամանակ անհրաժեշտ է համարվում մասնակի ստուգում կատարել այն վորոտային (ինչպես և գավառային) կուսակցական կազմակերպությունների մեջ, վորոնց կազմերում կան քայքայված և կուսակցությունից կտրված տարրեր, վորոնք վարկաբեկում են կուսակցությունը գյուղացիության աչքում: Գյուղական կուսակցական կազմակերպությունների այս ստուգմանը մասնակցելու պետք

ե կանչել անկուսակցական գյուղացիներին, և, բացի այդ, պետք է իրոք պատասխանատու կուսակցական աշխատողներ գյուղ ուղարկել: Անհրաժեշտ է, վոր կենտկոմը լրացուցիչ ցուցումներ տա գյուղական բՆիշների ստուգում կատարելու մասին:

4. Գյուղական կազմակերպությունների կուլտուրատիարակչական աշխատանքը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է համարվում գործուղել վոչ-պակաս, քան 3.000 պրոպագանդիստ և դրանց պատրաստումն մինչև սեպտեմբերի 1-ն ավարտելու համար՝ ձեռք առնել անհրաժեշտ միջոցները (ի միջի այլոց այդ նպատակով ոգտագործելով խորհրդային-կուսակցական և կոմունիստական բարձրագույն դպրոցների համեմատաբար լավ պատրաստված ունկնդիրներին):

5. Կուսակցությունների գավառական կոմիտեների հրահանգչական կազմն ուժեղացնելու նպատակով, նույն ժամկետին (մինչև սեպտեմբերի 1-ը) խոշորագույն կուսակցական կազմակերպություններից գործուղել վոչ-պակաս, քան հազար կուսակցական աշխատող, Արձանագրել, վոր 14-րդ կուսկոնֆերենցիան ուղիղ է համարում Մոսկվայի վերջին կուսակցական կոնֆերենցիայի վորոշումը, վորով վերջինս գտնում է, վոր պետե է ուժեղացնել գավառները Մոսկվայի մայրաքաղաքային կազմակերպության զիտան անցած պատասխանատու աշխատողներով:

6. Գյուղ ուղարկվող աշխատողների կազմը պետք է ուշի ուշով ստուգել: Վճռականապես կրճատել ժամանակավոր գործուղումների թիվը:

Մեծ նշանակություն ունի այնպիսի աշխատողները գյուղ ուղարկելը, վորոնք ինքնաբերաբար են այդպիսի ցանկություն հայտնում: Այս պատճառով մաժուրում և կուսակցական ժողովներում անհրաժեշտ է համապատասխան ազիտացիա մղել՝ դեպի գյուղ կամավոր աշխատող-

ներ ուղարկելու համար: Շեֆական ընկերությունների հատուկ ուշադրությունը հրավիրել գյուղի համար աշխատողներ (մասնավորապես կամավոր աշխատողներ) պատրաստելու խնդրի վրա:

7. Հավանություն հայտնել կենտկոմի համապատասխան վորոշումների հիման վրա բանվորական շեֆային ընկերությունների աշխատանքը ծավալելու գործում խոշոր պրոլետարական կազմակերպությունների (Լենինգրադ, Մոսկվա, Տուլա) հանդես բերած նախաձեռնությունը: Դրա հետ միասին, նկատի ունենալով շեֆային աշխատանքի միանգամայն սխալ և ուղղակի անթույլատրելի ձևերի գործադրումը (թեթևամիտ քաղաքական և հակակրոնական պրոպագանդան, շեֆային գործուղմանը զվարճություններ զուգակցելը և այլն), վոր քանիցս արձանագրվել է,— պարտավորացնել տեղական կուսակցական կոմիտեներին, վոր վճռականապես կռվեն այդ յերևույթների դեմ, նման շեֆական կազմակերպություններին զրկելով գյուղում ինքնուրույն շեֆական աշխատանք կատարելու իրավունքից:

Անհրաժեշտ է, վոր Հանրապետության Քաղվարչությունը (Պուր) հատուկ աշխատանք կատարի այս տարի իրենց ծառայությունն ավարտող ու գյուղ վերադարձող կարմիր-բանակայինների մեջ և, գյուղում կատարելիք կուսակցական աշխատանքի խնդիրները նկատի ունենալով, համապատասխան պատրաստություն տա նրանց:

8. Բանվորուհիների և գեղջկուհիների բաժինների գյուղում կատարվող աշխատանքի նկատմամբ անհրաժեշտ է գյուղի աշխատավորուհիների տնտեսական դրություն անմիջական բարելավման և գեղջկուհիներին դեպի խորհուրդները, կոոպերացիան, գյուղփոխոգկոմները և այլն քաշելու ասպարեզում ավելի մեծ ուշադրություն դարձնել այդ կազմակերպությունների քաղաքական աշխատանքը

դեղջկուհիների գործնական պահանջների հետ շաղկապելու վրա:

9. Ի փոփոխումն կուսակցութեան կանոնադրութեան, ներկա պայմաններում նպատակահարմար ե համարվում, վոր վոլոստային կուսակցական կոմիտեների ընտրութիւնները կատարվեն վոչ թե յերեք ամիսը մեկ անգամ, այլ վեց ամիսը մեկ անգամ: Այս վորոշումը ներկայացնել հերթական կուսակցական համագումարին ի հաստատութիւն:

III կուսակցութեան կազմի բարելավումը յեվ կուսակցութեան անձանց կանոնավորումը

Այս մի տարվա ընթացքում, կուսակցութեան 13-րդ համագումարից հետո, կուսակցութիւնը շարունակել ե աճել ընդհանուր առմամբ բնականոն կերպով և, գլխավորապէս, ի հաշիվ բանվորների: Սակայն, արձանագրելով այն փաստը, վոր մինչև որս դեռևս իրագործված չի 13-րդ կուս. համագումարի հիմնական վորոշումը կուսակցութեան կազմի կարգավորման մասին, այսինքն այն մասին, վոր մեր կուսակցութեան մեջ պետք ե վոչ պակաս, քան 50 տոկոս անմիջապէս արդյունաբերութեան մեջ զբաղված բանվորներ լինեն, — կոնֆերենցիան ընդունում ե, վոր 13-րդ կուսհամագումարի այդ վորոշումը հետագայում ևս պետք ե հիմնական ղեկավար ցուցմունքը լինի կուսակցութեան աճման կարգավորման գործում:

Դրա հետ միասին, ինչպէս ասվեց, անհրաժեշտ ե լրացնել գյուղական կուսակցական կազմակերպութիւնների կազմն ի հաշիվ գյուղի լավագույն և հեղափոխականորեն կայուն ու քաղաքակրթական պատրաստված աշխատավորների, ինչպէս և բատրակների ու չքավորների և միջակների այն մասի, վորը կուսակցութեանն ամենից մոտ ե կանգնած: Հիշեցնել կուսակցական կազմակերպութիւն-

ներին նաև այն, վոր անհրաժեշտ ե խստիվ ղեկավարվել 13-րդ համագումարի վորոշումը՝ ծառայողներին և քննադատներին կուսակցութեան մեջ ընդունելու մասին, ընդունելու ժամանակ կատարելով թե սահմանված, ձևական պահանջները և թե համագումարի վորոշման մեջ մատնանշված պահանջներն այն մասին, թե կուսակցութեան նոր անդամն ինչ չափով ե ընդունակ գործնականում ոգնոր անդամն ինչ չափով ե պրոլետարական դիկտատուրայի ներկա կուսակցութեանը և պրոլետարական դիկտատուրայի մարմիններին: Ընդհանրապէս կուսակցութեան հետագա աճման հարցում անհրաժեշտ ե ղեկավարվել այն սկզբունքով, վոր անհրաժեշտ ե պահպանել կուսակցութիւնը, վորպէս պրոլետարիատի իսկական կոմունիստական ավանգարդ և այդ պատճառով ներկա պայմաններում ավելի մեծ ուշադրութիւն դարձնել կուսակցութեան կազմի վորակը լավացնելու վրա, համապատասխան պահանջներ առաջադրելով այն բոլոր անդամներին, վորոնք նոր են մտնում կուսակցութեան մեջ:

Այս բանը նկատի ունենալով, ընդունել, վոր

1. Յերբ կուսակցութեան թեկնածու յեն մտնում անմիջապէս արդյունագործութեան մեջ զբաղված արդյունաբերական բանվորները, բավական ե միամյա կուսակցական ստաժ ունեցող յերկու կուսակցականի յերկու հանձնարարականն: Անհրաժեշտ ե համարվում պահպանել սովորութիւնն դարձած այն կարգը, վորի համաձայն կուսակցութեան մեջ մտնել ցանկացողների թեկնածութիւնը քննութեան ե առնվում բլիշների գոնբաց նիստերում: Այս վորոշումը ներկայացնել հերթական կուսակցական համագումարին ի հաստատութիւն:

2. Բատրակներից, հողագործ-գյուղացիներից և բանվորներից ու գյուղացիներից յերած կարմիր բանակայինների կուսակցութեան մեջ մտնելու գործը գյուղացներու նպատակով անհրաժեշտ ե համարվում կրճատել հանձնա-

ըարողները թիվը և նրանց ստաժը -- յերկամյա կուսակցական ստաժ ունեցող յերկու անդամի հանձնարարականով բավարարվելով. բացի այդ՝ անհրաժեշտ է համարվում, վոր այդ կատեգորիային պատկանող կուսակցութեան նոր թեկնածուների հաստատելը նահանգական կոմիտեյի փոխարեն գավկոմներին (և շրջկոմներին -- ОКРУЖКОМАМ) հանձնվի: Պարտավորացնել գյուղի տեղային ղեկավար կուսամարմիններին, վոր կուսակցական աշխատողներ գործուղեն այն վայրերը, վորտեղ կա գյուղացիների և բարակների հոսանք դեպի կուսակցութիւնը, բայց չկան հանձնարարելու իրավունք ունեցող կուսակցութեան անդամներ. գործուղվողները պետք է ծանոթանան կուսակցութեան մեջ մտնելու ցանկութիւն հայտնած գյուղացիների հետ և համապատասխան դեպքերում անհրաժեշտ կուսակցական հանձնարարականներ տան նրանց:

3. Ուժեղացնել պայքարը կուսակցութեան մեջ մտնելու մասին տրված հայտարարութիւնները (մասնավորապես գյուղացիներին) ընելու ժամանակ յերևան բերվող քաղքուկների դեմ, ինչպես և թեկնածուներին կուսակցութեան անդամ փոխադրելու գործի անթույլատրելի ձգձգման դեմ:

4. Անպայման դադարեցնել թե քաղաքում և թե գյուղում կուսակցութեան մեջ մասսայաբար նոր անդամներ ներգրավելու կամպանիաները:

5. Թույլ չտալ տեղային կուսակցական կազմակերպութիւններին, վոր կուսակցութեան մեջ նոր անդամներ ընդունելիս, նախապես սահմանեն ընդունման րազմերստկայի կարգ կամ տոկոսային փոխհարաբերութիւններ՝ ընդունվողների առանձին կատեգորիաների միջև:

6. Նկատի ունենալով կուսակցութեան ընդհանուր աճումը և կուսակցական շինարարութեան մեջ ավելի կազմակերպչական հստակութիւն մտցնելու անհրաժեշտու-

թիւնն, այսուհետև աննպատակահարմար համարել նպաստողների կամ համակրողները (իրենց առանձին ժողովները և այլն ունեցող) ամեն տեսակի հատուկ կազմակերպութիւնների գոյութիւնն ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում:

#### IV. Պիոներական կազմակերպութիւնների յեվ կոմերիսմիտիւրյան մասին

Վերջին տարին կոմյերիտմիտիւթեան աճման տարի յերթե քաղաքում և թե գյուղում: Կոմյերիտական կազմակերպութիւնների շարունակվող աճումը կոմյերիտմիտիւթեան և կուսակցութեան ղեկավար մարմինների առաջ ստիպողական պահանջ է դնում լավացնելու կոմյերիտմիտիւթեան աշխատանքը և, ամենից առաջ, նրա ակտիվի աշխատանքն, ինչպես և լավացնելու ու ուժեղացնելու կուսակցութեան ղեկավարութիւնը՝ կոմյերիտմիտիւթեան վերաբերմամբ: Կոմյերիտմիտիւթեանը, վորպես բանվորական և գյուղացիական յերիտասարդութեան կազմակերպութիւն, չպետք է արգելքներ հարուցի ընդդէմ՝ իր առողջ աճման ի հաշիվ բանվոր-գյուղացիական առաջադեմ յերիտասարդութեան: Միաժամանակ կոմյերիտմիտիւթեան առաջ միշտ պետք է կանգնած լինի մի խնդիր՝ կիրառել պրոլետարական ղեկավարութիւնը կոմյերիտմիտիւթեան մեջ և կոմյերիտմիտիւթեան միջոցով բանվորական ու գյուղացիական յերիտասարդութեան լայն մասսաների մեջ: Համաձայն դրա, անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրութիւն դարձնել վոր կոմյերիտմիտիւթեան ղեկավար կազմերը կոմյերիտմիտիւթեան մեջ ուղիղ կերպով բաշխվեն: Այսուհետև անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել կոմյերիտմիտիւթեան համար կուսակցորեն կոփված նոր ղեկավարներ պատրաստելու համար: Վերջապես անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կոմյերիտմիտիւթեան կազմակերպութիւն-

ները գտնվեն կուսակցութեան իսկական և գործնական ղեկավարութեան տակ, գործնականապես ղառնալով կուսակցութեան հիմնական սկզբունքները, մանավանդ գյուղում:

Կոմյերիտմիութիւնը, մասնակցելով գանազան խորհրդային, կոոպերատիվ և այլ կազմակերպութիւններին գործնական աշխատանքին, մանավանդ գյուղում, ինչպէս և ամեն ուր սկզբելով գյուղացիութեանը՝ խորհրդային որենսդրութեան մեկնաբանութեամբ և այդ որենսդրութեան ուղիղ սգտագործութեամբ հոգուտ չքաւոր գյուղացիութեան, — պետք է այնպէս անի, վոր իր հեղինակութիւնը գյուղացիութեան և բանվորների աչքում ավելի ևս բարձրացնի: Այս բոլորն անհրաժեշտ է մանավանդ այն պատճառով, վոր ներկայումս կ'մյերիտմիութեան անմիջական ղեկավարութեամբ ավելի ու ավելի յե ծավալվում պիտենեներին կազմակերպելու հակայական աշխատանքը, վոր հրակայական նշանակութիւն ունի կուսակցութեան համար:

Այս պատճառով՝

1. Կոմյերիտմիութեան նկատմամբ կուսակցութեան գլխավոր խնդիր համարել այն. վոր անհրաժեշտ է բոլոր միջոցներով ուժեղացնել կոմյերիտմիութեան կազմակերպութիւններին մեջ մտնող բանվորական և գյուղացիական յերիտասարդութեան լենինյան դաստիրակութիւնը, վորի համար պետք է հասուկ ուշադրութիւն դարձնել կոմյերիտական մամուլի ստեղծման վրա. կոմյերիտական ղեկավար ժուրնալից գատ, պետք է ստեղծել կենտրոնական կոմյերիտական լրագիր, բարելավել կոմյերիտական տեղային մամուլը, ավելի մեծ ուշադրութիւն դարձնել գյուղի համար հրատարակվող ամբողջ կոմյերիտական գրակաւութեան վրա:

Ինչոր տեղային կուսակցական կազմակերպութիւնները պետք է պրոպագանդիստ կուսակցականների վորոշ կազմ հատկացնեն՝ կոմյերիտմիութեան դաստիարակչական

աշխատանքի համար: Դրա հետ միասին պետք է ոգնել կոմյերիտմիութեանը՝ յերիտասարդութեան իսկ շարքերից պրոպագանդիստներ պատրաստելու գործում:

2. Անհրաժեշտ է, վոր կոմյերիտմիութեան (և կուսակցութեան) ղեկավար մարմիններն ուշադիր կերպով հետևեն կոմյերիտական կազմակերպութիւնների կազմի աճմանն ու կանոնավորմանը, մանավանդ գյուղում, վտարելով վարկաբեկիչ և միանգամայն անկարգապահ տարրերին. բացի այդ, անհրաժեշտ է, վոր հիշյալ կազմակերպութիւնները ձեռք առնեն ամեն միջոց՝ կոմյերիտմիութեան գյուղական բջիջների բատրակային չքավորական միջուկն աճրապնդելու համար:

Կոմյերիտմիութեան մեջ անդամներ ընդունելը մեքենայաբար արգելին. ինչպէս և ընդունվող խմբակների նրկատմամբ մասնատրում (разверстка) և տոկոսային փոխհարաբերութիւններ սանմանելն անթույլատրելի համարել:

3. Մինչև այս տարվա աշունը գյուղ գործուղել վոչ պակաս, քան յերկու հազար կոմյերիտական աշխատող՝ կոմյերիտմիութեան գավկոմների հրահանգչական ապարատն և անմիջականորեն կոմյերիտական վոլոստային կազմակերպութիւններն ուժեղացնելու համար, գործուղվողներին նախապէս համապատասխան նախապատրաստական դասընթացներն ավարտել տալով: Այդ աշխատանքը համաձայնեցնել կուսակցական գծով կատարվող համապատասխան գործուղումների հետ:

4. Կոմյերիտմիութեան անդամներն ապորինաբար միջամտում են խորհուրդների և գյուղական այլ կազմակերպութիւնների աշխատանքին, անհրաժեշտ է վճռականապէս պայքարել այդ յերկույթի, ինչպէս և հակակրօնական պայքարի անթույլատրելի ձևերի դեմ, այդ նպատակով ձեռք առնելով (ՌԼԿՅՅՄ նահանգական կոմիտեների միջոցով) անհրաժեշտ միջոցներ, մինչև իսկ առանձին տեղային կազմա-

կերպություններ (գյուղի) կամ վոյստի ցրելով:

5. Ներկայումս կոմյերիտմիության աշխատանքի կարևորագույն հարցը կոմյերիտական ակտիվի կազմերի ամբողջումն է (մանավանդ գյուղում), վորի համար անհրաժեշտ է.

ա. Ուղիղ հիմքերի վրա դնել այդ կազմերի հաշվառումը.

բ Ամեն միջոցով և սիստեմատիկաբար նպաստել այդ կազմերի և կոմյերիտմիության մեջ գտնվող վողջ կուսակցական կորիզի քաղաքական զարգացմանն ու գաղափարական աճմանը.

գ. Այդ կազմերին պատկանող անձերից հետզհետե ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ քաշել դեպի կուսակցության շարքերը.

6. Պիոներական կազմակերպությունների բացառիկ կերպով արագ աճելը թե քաղաքում և թե գյուղում կոմյերիտմիությունից և կուսակցությունից պահանջում է ավելի մեծ ուշադրութուն դարձնել այդ աշխատանքի լավացման վրա:

Ներկայումս առանձնապես անհրաժեշտ է համարվում ձեռք առնել համապատասխան միջոցներ՝ շտապողական կարգով կուսակցության և կոմյերիտմիության համեմատաբար պատրաստված աշխատողներից պիոներական շարժման ղեկավարների նշանակելի կազմեր պատրաստելու համար:

7. Ինչպես կոմյերիտմիության, այնպես էլ պիոներական կազմակերպությունների աշխատանքի մեջ անհրաժեշտ է ուշադրութուն դարձնել հենց այդ աշխատանքի կանոնավորման վրա: Այս պատճառով, անհրաժեշտ է վճռականապես կռվել կոմյերիտմիության և պիոներների աշխատավորներին աշխատանքով չափից դուրս ծանրաբեռնելու դեմ. միևնույն ժամանակ անհրաժեշտ է իրական

միջոցներ ձեռք առնել՝ նրանց առողջությունն ու նորմալ զարգացումը պահպանելու համար:

## 2. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության տնտեսական շինարարության ընթացիկ շրջանի բնորոշ գիծն այն է, վոր արագորեն աճում են յերկրի արտադրական ուժերը:

Խորհրդային պետության տնտեսական շինարարության ասպարիզում վճռական հաջողություններ են ձեռք բերված: Գյուղատնտեսությունը բարձրանում է և նրա ավրանքայնացումն աճում, արագորեն ծավալվում է խոշոր արդյունաբերության աշխատանքը և լավանում է տրանսպորտը, բարձրանում է աշխատանքի արտադրականությունն, ընդարձակվում է առևտրական շրջանառությունը և վճռական շարժում է կատարվում դեպի գյուղատնտեսության ու արդյունաբերության արտադրանքների գների հավասարեցումը. դադարեցրված է եմիսիան և դրան զուգընթաց աճում է պետական բյուջեն—ահավասիկ ՍՍՀՄ տնտեսության վերականգնման պրոցեսի հիմնական փաստերը:

Կայուն վալյուտայի անցնելը և հաստատուն դրամական շրջանառության հաջող կիրառումը նոր էջ են բացում ՍՍՀՄ տնտեսական շինարարության մեջ, հետագա տնտեսական պրոգրեսի համար հաստատուն բազաստեղծելով:

Կուսակցության և խորհրդային իշխանության հիմնական խնդիրն այն է, վոր շարունակեն նպաստել արտադրական ուժերի զարգացմանը: Արտադրական ուժերի այդ աճումը տեղի յե ունենալու այնպիսի պայմաններում, յերբ արդյունաբերության մի շարք ճյուղերում արդեն սպառված կլինեն կամ սպառվելու վրա կլինեն հին հիմ-

նական կապիտալի հաշվին զարգանալը շարունակելու հնարավորութիւնները: Իր հերթին գյուղատնտեսութեան աճումը թելադրում է անհրաժեշտաբար և շուժափուլթ կերպով սերմնափոխութեան յեռավայ սիստեմը (ТРЕХПОЛЬЕ) բազմամյա սիստեմով (МНОГОПОЛЬЕ) փոխարինել և գյուղատնտեսական արտադրութեան ավելի կատարյալ մեթոդների անցնել: Կուսակցութեան և պետութեան առաջ կանգնած է մի խնդիր՝ պահպանել տնտեսութեան վերականգման այն թափը, վորին հասել ենք. իսկ այդ բանը կարող է ապահովվել, յեթե համապատասխան քաղաքականութիւն տարվի յերկրի հիմնական կապիտալի արտադրութեան և վերարտադրութեան նկատմամբ՝ ինչպես արդիւնաբերութեան ու տրանսպորտի, այնպես էլ գյուղատնտեսութեան ասպարիզում:

Սակայն արտադրական ուժերի աճումը ապրանքադրամային հարաբերութիւնների հետագա զարգացման պայմաններում նոր դժվարութիւններ էլ է ծնեցնում: ՍՈՂՄ տնտեսութեան սոցիալիստական տարրերի ամբողջմանը զուգընթաց և միևնույն ժամանակ տեղի ունի և տեղի յե ունենալու մասնավոր կապիտալի զարգացումը և դրա հետ կապված՝ մրցման մասնակի սրումը տնտեսութեան սոցիալիստական և կապիտալիստական տարրերի միջև թե քաղաքում և թե մանավանդ գյուղում:

Տնտեսական նոր քաղաքականութեան անցնելու հետևանքով սկսվել է գյուղի շերտավորումը, վորն ամենամոտիկ ապագայում իր արտահայտութիւնը կգտնի նրանում, վոր մեկ կողմից ժամանակավորապես կշարունակի ուժեղանալ գյուղացիութեան ունևոր խավերից յեւնող գյուղացիական բուրժուազիան, և մյուս կողմից կը պրոլետարանան գյուղացիութեան չքավոր տարրերը:

Այս պատճառով, պետութեան տնտեսական քաղաքականութեան ձեռնարկումներն, ինչպես ամբողջ ժողովրդա-

կան տնտեսութեան կարգավորման ասպարիզում, այնպես էլ մանավանդ գյուղատնտեսութեան ասպարիզում, չեն կարող հաշվի չառնել այս փաստը: Կուսակցութեան և Խորհրդային իշխանութեան ընդհանուր քաղաքականութիւնն ուղղված պետք է լինի դեպի մի կողմ—ամբողջնել մեր ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական սկզբունքները և ապահովել պետութեան իրական վերահսկողութիւնը՝ գյուղում տեղի ունեցող բոլոր տնտեսական պրոցեսների նկատմամբ: Այդ նպատակով անհրաժեշտ է, մասնավորապես, ոգտագործել գյուղացիութեան հիմնական մասայի վարկավորման և ոգնութեան համար այն նյութական ռեսուրսները, վոր ստացվում են կուտակման ամբողջ թափի արագացման և դրա պատճառով ազգային յեկամուտի ու բյուջետային միջոցների աճման հետևանքով:

Չնայած քաղաքի, ինչպես և գյուղի արտադրական ուժերի արագ զարգացմանը, այնուամենայնիվ պարզվեց, վոր գյուղի ամբողջ հավելյալ բնակչութիւնն ոգտագործելու համար այդքանը դեռևս բավական չէ: Այս պատճառով անհրաժեշտ է գյուղում նշանակելի թիվ կազմող բանվորական ձեռքերի արդիւնաբեր գործադրութեան հրնար գտնել: Այս բանին կարելի յե հասնել գյուղատնտեսութեան ինտենսիֆիկացիայով, արդիւնաբերութեան զարգացումը շարունակելով, տնայնագործական և չվար արհեստագործութեան (ОТХОЖИЕ ПРОМЫСЛА) զարգացումով, գյուղատնտեսութեան մեջ վարձու աշխատանքի գործադրութեան պայմանների թեթևացումով և հողի կարճատև վարձակալութեամբ, ինչպես և արտագաղթ կազմակերպելով ու սակավազոր գյուղացիական տնտեսութիւններին լայն արտադրական ոգնութիւն ցույց տալով:

Կոոպերացիայի նկատմամբ ձեռք առնելիք միջոցները պետք է զարգանան Միութեան վողջ տնտեսական քաղաքականութեան հետ լիովին համաձայնեցրած կերպով:

Գյուղի ապրանքաշրջանառութեան և մանր ապրանքային տիրապետութեան պայմաններում, կոոպերացիան պետական տնտեսութեան և գյուղի մանր ապրանքարտադրողի միջև յեղած կապի հիմնական հասարակական տնտեսական ձևն է: Միայն նա յե, վոր կարող է պետութեանը մեծագույն հնարավորութեանը տալ վերահսկելու և կարգավորելու ինչպես մանր գյուղատնտեսական արտադրութեանը, այնպես ել ապրանքային շրջանառութեանը մեր յերկրում:

Այս պատճառով կոոպերատիվ շինարարութեանը ներկայումս բացառիկ կարևոր նշանակութեան է ստանում:

Վորպեսզի կոոպերացիան լավագույն կերպով կարողանա ընդգրկել գյուղի տնտեսական կյանքի բոլոր պրոցեսներն՝ անհրաժեշտ է կոոպերացիային մասնակցելու իրավունք տալ ազգաբնակչության այն բոլոր խավերին, վորոնք գյուղատնտեսութեամբ են զբաղվում:

Իսկ վորպեսզի կոոպերացիայի ասպարիզում ղեկավարող ազդեցութեանը տպահովաբար գյուղացիութեան մեծնամասնութեան ձեռքին մնա, բոլոր տեսակի կոոպերատիվ կազմակերպութեաններն իրենց կանոնադրութեաններին մեջ պետք է միացնեն սահմանափակումներ այն մասին, վոր ակնհայտ կուլակային տարրերին արգելվում է մտնել ընկերութեանների վարչութեան կազմի մեջ:

Կուսակցութեան և չքավոր ու միջակ գյուղացիութեան ամեն տեսակի կազմակերպութեանների (փոխոգնութեան կոմիտեաներ և այլն) աշխատանքն այնպեսի ուղղութեամբ պետք է տարվի, վոր բնակչութեան աղքատ և միջակ խավերի շահերն ապահովվեն: Կոոպերատիվ և պետական առևտուրը չի կարող յերկրի աճող ապրանքաշրջանառութեանը ամբողջապես միայն իր ուժերով կատարել, վորի հետևանքով առևտրի ասպարիզում մասնավոր կապիտալին նշանակելի դեր է մնում: Մասնավոր առևտրա-

կան կապիտալի այսպիսի դերը հաշվի առնելով, կուսակցութեանը միևնույն ժամանակ ամեն կերպ պետք է պայքարի այն բոլոր փորձերի դեմ, վոր կարվեն՝ ներկա առևտրական քաղաքականութեանը մեկնաբանելու այն մտքով, վոր իբր թե կուսակցութեան և խորհրդային իշխանութեան վերաբերմունքը դեպի կոոպերացիան փոխվել է: Առևտրի ասպարիզում մասնավոր կապիտալին բաժին մնացած այդ դերը վոչ թե փոքրացնում, այլ մի քանի անգամով մեծացնում է կոոպերացիայի և մասնավորապես սպառողական կոոպերացիայի առաջ դրված խնդիրներն ու, բնականաբար, թելադրում է կուսակցութեանը ու պետութեանը՝ կոոպերացիայի կարիքներին ավելի ուշադիր վերաբերվելու և ավելի վճռական կերպով նրան ոժանդակելու անհրաժեշտութեանը:

Պետք է միջոցներ ձեռք առնվեն եժանացնելու կոոպերացիային, մանավանդ գյուղատնտեսականին տրվող վարկերը, վորպիսի հանգամանքը կոոպերացիայի աշխատանքի հաջող ծավալման հատուկ պայմաններից մեկն է:

Կոոպերացիայի առաջ կանգնած է իր ֆինանսական տնտեսութեան կարգավորման և կոոպերատիվ միջոցների կուտակման խնդիրը. դրա իրականացմանը նպաստելու գործում եյական դեր են խաղալու կոոպերատիվ բանկերը, ուստի դրանց ամբացման ու զարգացման վրա կուսակցութեանը պետք է բավարար չափով ուշադրութեան դարձնի:

Իր հերթին կոոպերացիան ել պետք է ձեռք առնի ամեն մի միջոց, վորպեսզի շուտով վերացնի իր ներքին հիվանդութեանները, վորոնք մինչև այսօր արտահայտվել են գլխավորապես նրանում, վոր կոոպերացիան չի կարողացել համաձայնեցնել իր խնդիրներն ու միջոցները, անկայուն են յեղել նրա կազմակերպչական ձևերը, բացա-

կայել ե ապարատների ճկունութիւնը, չի վերացվել թանկութիւնը և այլն:

Կոոպերացիայի աշխատանքի վորակը ներկա մոմենտում վճռական նշանակութիւն ունի: Այս խնդրի լուծումից ե կախված նաև կոոպերացիայի հետագա աճումը:

Ներկա մոմենտում ամենավտանգավոր խնդիրը տարբեր տեսակի կոոպերացիաների (գյուղատնտեսական վարկային, սպառողական և արհեստագործական) ֆունկցիաների շփոթելն ե: Հետագայում պետք ե խստիվ սանձանագծել նրանց ֆունկցիաները, մանավանդ սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիաների ֆունկցիաները. գյուղատնտեսական կոոպերացիան յերբեք չպետք ե զբաղվի բնակչութան անձնական սպառման առարկաներ հայթայթելու գործով:

Փունկցիաների այդորինակ սահմանագծումը գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի ոտորին կազմակերպութիւնների ամուր և միասնական ցանց ստեղծելու հիմնական նախադրյալն ե: Այդ միասնական ցանցը, մնալով գյուղատնտեսական կոոպերացիայի ընդհանուր սխտեմի մեջ, պետք ե միավորի ինչպես վարկային ու արտադրական ֆունկցիաներն, այնպես ել սպառման (СБЫТ) ու հայթայթման միջնորդական գործառնութիւնները: Անմիջականապես վարկի համար հատկացված միջոցները վոչ մի դեպքում չպետք ե ոգտագործվեն վորևե այլ գործառնութիւնների համար, ինչպես և չեն կարող ոգտագործվել վոչ ստորին կարգի կոոպերատիվներում, վոչ ել կոոպերատիվ միավորումների մեջ՝ վարկային կապիտալները կոոպերատիվ գործունեութիւնն այլ տեսակների համար գործադրելով:

Այս պատճառով գյուղատնտեսական վարկային կոոպերացիայի նոր կանոնագրութիւն պետք ե մշակել:

Բարելավելով կոոպերատիվ մարմինների աշխատանքը

և ամեն տեսակի արտոնութիւններ ապով կոոպերացիային ու կոոպերացված բնակչութիւնը, կուսակցութիւնը և պետութիւնը պետք ե ապահովեն բնակչութիւնն ավելի ու ավելի մեծ մասսաների ներգրավումը դեպի կոոպերացիա: Կոոպերացված բնակչութիւնն այդ արտոնութիւնները յերբեք չպետք ե տրվեն ի հաշիվ ամբողջ գյուղացիութիւնը ոգնելու համար հատկացված պետական միջոցների: Իսկ այն դեպքերում, յերբ ընդհանուր պետական ձեռնարկումները կոոպերացիայի համաձայնութիւնով կոոպերատիվ մարմինների միջոցով են կիրառվում, պետք ե ստեղծել այնպիսի պայմաններ, վոր կոոպերացիան անպատճառ ծառայի նաև բնակչութիւնն չկոոպերացված մասին:

Կոոպերացիայի զարգացման և բնակչութիւնն լայն խավերին կոոպերացիայի աշխատանքին ակտիվ կերպով մասնակցութիւն կանչելու հիմնական նախադրյալը պետք ե հանդիսանա կոոպերացիայի այնպիսի կազմակերպչական ձևը, վոր դրանով լիովին ապահովվի ընտրութիւնների ազատութիւնն և ընտրված մարմինների պատասխանատու ու հաշվետու լինելն իրենց ընտրողների առաջ: Տեղերի կուսակցական և խորհրդային մարմինները չպետք ե թյուլ տան, վոր վարչական միջամտութիւն կատարվի կոոպերացիայի աշխատանքի մեջ և պետք ե հոգան, վոր ճշտիվ գործադրվեն կոոպերատիվ կանոնագրութիւնները:

Կուսակցական կազմակերպութիւնները վոչ մի դեպքում չպետք ե մոռանան նաև այն, վոր կոոպերատիվ շարժումը գյուղական բնակչութիւնն նկատմամբ (գյուղում) պետք ե խաղա նույն դաստիարակիչ դերը, վորպիսի դեր խաղում ե արհմիութիւնն անկուսակցական բանվորական մասսաների նկատմամբ:

Կուսակցական, խորհրդային և արհեստակցական տեղային մարմինները կոոպերացիայի վրա յերբեք չպետք ե դնեն նրա անմիջական գործունեութիւնն հետ չկապված և

նրա կանոնադրութիւնը խախտող՝ պարտականութիւններ, ծախսեր և խնդիրներ:

Գյուղատնտեսական-վարկային կոոպերացիան պետք է հատուկ ուշադրութիւն դարձնի գյուղատնտեսական վարկի և գյուղատնտեսական մթերքներէ արտադրանքների սպառման, հայթայթման ու վերամշակման գործը կազմակերպելու վրա, վորովհետև հենց այդ ճանապարհով է, վոր նա կարող է մոտենալ գյուղացիութեան լայն խավերի իսկական և անմիջական կոոպերացման: Դրան զուգընթաց, գյուղատնտեսական վարկային կոոպերացիան պետք է ոգնութեան գա կիրառաբայեցալված ու ձիագուրկ գյուղացիութեան մասսային և ոգնի նրանց վրաքի կանգնել, մասնավորապես արտելներ, գյուղատնտեսական ընկերութիւններ, կոլլեկտիվ տնտեսութիւններ, կոմունաներ և գյուղատնտեսական աշխատանքի ու արտադրութեան կոլլեկտիվ կազմակերպութեան այլ ձևեր ստեղծելու միջոցով:

Գյուղատնտեսական վարկային կոոպերացիայի կողմից գյուղացիներէ տնտեսած միջոցներէ լայն ներգրավումը հիմնական պայմանն է՝ գյուղացիական տնտեսութեանը դրամական արտադրական վարկ մատակարարելու և գյուղացիական տնտեսութեան մեջ կուտակվող միջոցներն ընդհանուր տնտեսական քաղաքականութեան համաձայն ոգտագործելու համար:

Գյուղի արտադրական ուժերի գորգացումը սերտորեն կապված է տնայնագործական և չվառ արհեստագործութեան զարգացման հետ, վորոնք վորոշ շրջաններում գյուղացիութեան յիկամուտի նշանակելի մասի աղբյուր են հանդիսանում: Այստեղից է բղխում այն հսկայական նշանակութիւնը, վոր ունի տնայնագործական — արհեստագործական կոոպերացիան:

Իր առաջ դրված խնդիրները կոոպերացիան հաջողութեամբ կարող է լուծել միայն այն դեպքում, յեթե կուսակցութիւնն ավելի մեծ չափերով, քան մինչևայժմ

է արել, անհրաժեշտ ուժեր հատկացնի կոոպերատիվ շինարարութեան համար:

Կուսակցական կազմակերպութիւնները պետք է խուսափեն աշխատողներին հաճախակի կերպով մեկ գործից մեկ ուրիշ գործի փոխադրելուց. ինչպես կոոպերացիայի ներսում, այնպես էլ կոոպերատիվ շինարարութեան ասպարեզից դեպի աշխատանքի այլ տեսակներ:

Կուսակցութեան անդամներին կոոպերատիվ աշխատանքի քաշելու ժամանակ կուսակցական կազմակերպութիւնները պետք է յերևան բերեն հատուկ ուշադրութիւն և ամենայն վճռականութեամբ պայքարեն բոլոր այն փորձերի դեմ, վորտեղից էլ վոր նրանք բղխելիս լինեն, վոր նպատակ կունենան ոգտագործելու կոոպերացիան, վորպես ժամանակավոր գործուղման վայր այնպիսի ընկերների համար, վորոնք կոոպերացիայում որգանական աշխատանք չեն կատարում:

Կոոպերատիվ աշխատանքի կանոնավորման և բնակչութեան լայն մասսաների վստահութիւնը դեպի կոոպերացիան ամբողջութեամբ տեսակետից, ներկայումս հատուկ նշանակութիւն է ստանում կոոպերացիայի մարմիններում շարարկումներէ, զեղծարարութեան և անտնտեսարարութեան դեմ մղվող պայքարը:

Կուսակցութիւնն ու կոոպերատիվ որգանները պետք է ձգտեն ստեղծել Խորհրդային իշխանութեան ընդհանուր խնդիրներն ըմբռնող և կոոպերատիվ աշխատանքի գործնական պահանջներին լիովին բավարարող, ինչպես կուսակցական, այնպես էլ անկուսակցական խորհրդային կոոպերատորների միայուն կազմեր: Կոոպերատիվ աշխատողների նոր կազմեր ստեղծելու այս գործում նշանակելի դեր պետք է խաղա կանանց կոոպերատիվ աշխատանքի լծելը:

Գյուղատնտեսական յեվ վարկային կոոպերացիայի մասին

Գյուղացիական տնտեսության զարգացման ու նպատակահարմարեցման և տնտեսական շինարարության մեջ գյուղացիության մասնակցությունն ուժեղացնելու նպատակով ձեռք առնվող միջոցների շարքում գլխավոր տեղը պետք է պատկանի գյուղատնտեսական և վարկային կոոպերացիային, կոոպերացիայի կազմակերպչական-տնտեսական ամրացմանն ու զարգացմանը:

1. Գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի առաջնահերթ խնդիրներն են՝

ա) կազմակերպել կոոպերատիվ վարկը.

բ) գյուղի տնտեսության արտադրանքի ապրանքայնացման զարգացման հողի վրա՝ կազմակերպել գյուղատնտեսության արտադրանքների վերամշակումն ու սպառումը.

գ) զարգացնել կուլիկտիվ յերկրագործության բոլոր հնարավոր ձևերն՝ ամեն տեսակի կուլիկտիվ տնտեսություններ, կոմունաներ և այլն ստեղծելով.

դ) գյուղացիական լայն մասսաներին արտադրության միջոցներ հայթայթել:

Հայթայթման, վերամշակման, սպառման և գյուղատնտեսական վարկի գործը կազմակերպելու միջոցով կարող են ստեղծվել այնպիսի պայմաններ, վոր խորհրդային պետությունը կկարողանա մասսայական ազդեցություն գործել մեկուսացած և ցրված գյուղացիական տնտեսությունների արտադրական պրոցեսների վրա:

Գյուղատնտեսական կոոպերացիան պետք է զարգանա մեկ կողմից հատուկ գյուղատնտեսական ընկերությունների և մյուս կողմից գյուղատնտեսական վարկային ընկերությունների ուղղությամբ:

Գյուղատնտեսական վարկային ընկերություններն իրենց վարկային գործունեությունները կազմում են գյուղ-

ղատնտեսական վարկի կազմակերպության ընդհանուր սիստեմի (վորի գլուխ է կանգնած կենտր. Գյուղատն. Բանկը) ստորին ցանցը, իսկ իրենց սպառողական, հայթայթիչ և արտադրական աշխատանքով, ինչպես և կոոպերատիվ հրահանգավորումով, նրանք մտնում են գյուղատնտեսական կոոպերացիայի կազմի մեջ:

Կուսակցության կողմից առաջներում ընդունված դիրեկտիվները ստորին կոոպերացիային ամեն կերպ նըպաստելու և նրան ամրացնելու մասին՝ լիովին պահպանում են իրենց ուժը: Սակայն անհրաժեշտ է պայքարել ֆեասակար թեքումների դեմ, վորոնց արտահայտությունը կարող է լինել արհամարական վերաբերմունքը դեպի կոոպերատիվ միավորումները:

Անհրաժեշտ է ամեն կերպ նպաստել ամենաառաջադեմ և ակտիվ գյուղացիությունը դեպի գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի և մասնավորապես նրա ստորին ցանցի ընտրովի մարմինները գրավելու գործին: Տեղային մարմինները չպետք է թյուրյատրեն վարչական (ադմինիստրատիվ) միջամտություն կոոպերատիվների գործունեությունից մեջ, մասնավորապես, վերակառուցումների, շրջանացման, միաձուլման, բաժանման, ընձյուղման (ВЫДЕЛЕНИЯ) կամ կոոպերացիային վերաբերվող որենքներով չնախատեսված ձևով գործառնությունները սահմանափակելու տեսակետից:

2. Հատուկ արտադրական ու վաճառման գյուղատնտեսական կոոպերատիվ միավորումներ ստեղծելու փորձնարդարացրեց իրեն. անհրաժեշտ է շարունակել ու խորացնել այդ գործունեությունը: Բայց ստորին կոոպերացիայի և տեղական միութենական ցանցի սպեցիալիզացիան պետք է կատարել մեծ զգուշավորությամբ, հաշվի առնելով սովյալ շրջանի տնտեսական առանձնահատկությունները

և կոոպերատիվ ցանցի կարողութունը, վորպեսզի դրանով չթուլացվի ա՛րող սիստեմը:

3. Գյուղացիական տնտեսութունների ստորին վարկային միավորման հիմնական տիպ պետք է հանդիսանա միջնորդական ֆունկցիաներ ունեցող գյուղատնտեսական վարկային ընկերութունը: Այդ ընկերութունների հիմնական գործունեության նպատակը պետք է լինի՝ ներգրավել գյուղացիության տնտեսումները վորպես ավանդ և կատարել վարկային ոպերացիաներ:

Առևտրա-միջնորդական ոպերացիաներ ընկերութունը կարող է կատարել իր անդամների հանձնարարությամբ: Իրենց հաշվին առևտրական և արտադրական ոպերացիաներ կարող են կատարել միայն հատուկ կապիտալ լինելու դեպքում: Միայն այդպիսի ընկերութունն է կարող ավանդառման ոպերացիաներ կատարել, առանց ավանդատուների շահերը ռիսկի յենթարկելու: Գյուղատնտեսական վարկային ընկերութունները սպառման առարկաների առևտուր յերբեք չպետք է անեն:

4. Գյուղատնտեսության կոլլեկտիվացմանն անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրութուն նվիրել, քան մինչև այժմ է արվել: Ամեն տեսակի կոլլեկտիվ տնտեսութունների (ընկերութունների, արտելների և կոմունաների) կազմակերպումը պետք է ապահովեցնի նրանց ապրանքայնացման զարգացումը և կառուցվի տնտեսական հաշվարկման հիմունքներով: Անհրաժեշտ է ուշադրութուն դարձնել կոլլեկտիվների և տնտեսութունների վարկավորման ուժեղացման և նրանց գյուղատնտեսական արտադրանքի սպառման գործի կազմակերպման վրա: Հողաշինարարական մարմիններն իրենց աշխատանքով պետք է ապահովեն առաջին հերթին գյուղացիության այն մասի պահանջների բավարարումը, վորը տնտեսարարության կոլլեկտիվ ձևերի յե անցնում:

Հատուկ նշանակութուն ունի կոլլեկտիվ տնտեսութունների տեխնիկայի բարձրացումը, վորի համար պետք է լավացնել նրանց համար կենդանի և մեռյալ ինվենտար հայթայթելու գործը:

5. Գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի սիստեմի ներսում իսկ անհրաժեշտ է կիրառել մի շարք միջոցներ՝ նրա առողջացման համար:

ա) Պետք է իրականացնել սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիայի ֆունկցիաների լիակատար սահմանազծումը:

բ) Սկզբում տնտեսական գործունեյութունը պետք է կենտրոնացնել մի քանի ճյուղերում և գործել անպայման տնտեսական հաշվարկման հիմունքով ու ռեալ միջոցները նկատի ունենալով:

գ) Ապահովել ամբողջ աշխատանքի իրական ոգտաբերությունը:

դ) Շարունակել վերագիր ծախսերի կրճատումը, մասնավորապես կոոպերացիայի ստորին ցանցում, ամենուրեք, վորտեղ վոր հնարավոր է, վարչության մի վարձատրովի անդամով սահմանափակվելով:

յե) Կիրառել ամենախիստ վարկային կարգապահության սկզբունքներ:

զ) Ամենայն վճռականությամբ կիրառել այն սկզբունքը, վոր յուրաքանչյուր կոոպերատիվ կազմակերպութուն պատասխանատու յե իր վրա վերցրած բոլոր պարտավորությունների համար, անկախ վարչական մարմինների փոխվելուց:

ե) Ուժեղացնել գյուղատնտեսական կոոպերացիայի միավորումների կազմակերպչական հրահանգչական և վերստուգման աշխատանքները:

6. Բնակչութունը պետք է իր նյութական միջոցներով մասնակցի գյուղատնտեսական և վարկային կոո-

պերացիայի բաժնետիրական և այլ կապիտալներին. այս ինդիքն անհրաժեշտ է դնել իր ամբողջ ծավալով: Կոոպերատիվ գործունեություն պրակտիկայի մեջ պետք է լիովին ապահովել ավանդների գաղտնիքը որենսդրական ճանապարհով: Անհրաժեշտ է ապահովել կոոպերատիվ կապիտալների աճումն ի հաշիվ շահույթների (прибыли): Ստորին կարգի կոոպերացիան պետք է նպատակ դնի այնպես անել, վոր գյուղացիությունը վարկավորի իր կոոպերացիան, իր անտեսություն արտադրությունը օճարի զացիայի համար վարկով նրան տալով և իր պատվիրած հայթայթման առարկաների համար կանխավճարներ մուծելով: Պետք է հրատարակել հատուկ օրենք, վորի նպատակը պիտի լինի լիովին ապահովել այն, վոր բնակչությունը տրվելիք վարկային ոգնություն համար հատկացված միջոցները, վորոնք գոյանում են ինչպես գյուղատնտեսական վարկից, այնպես էլ բնակչության փայամուծանքներից և ավանդներից, լիովին և ամբողջապես ազատվեն գյուղատնտեսական կոոպերացիայի միությունների ու այլ կազմակերպությունների վորևե պարտավորության, ինչպես և վարկային ընկերությունների միջնորդական գործառնությունների համար գործադրվելուց, բացառությամբ այն դեպքերի, յերբ այդ միջոցներից հատուկ փայ է կազմվում՝ գյուղատնտեսական կոոպերացիայի միությունը բաժնեկից դառնալու համար:

7. Գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի համար գոյություն ունեցող պայմաններում շուտափույթ կերպով սեփական միջոցներ ստեղծելու համար անհրաժեշտ է, վոր պետությունն ուղիղ հիմքերի վրա դրված ֆինանսական ոգնություն ցույց տա նրանց, վորպիսի ոգնությունը պետք է իրականացնել բնակչության միջոցները ներգրավելուն զուգընթաց: Գյուղատնտեսական վարկային կոոպերացիայի կապիտալների ուժեղացումը պետք

է կատարել նրա հիմնական կապիտալներն ավելացնելու համար, ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական միջոցներից բաց թողնելով յերկար ժամանակյա փոխառություն, վերջինս շիջեցման պայմանները հատուկ պայմանագրերով վորոշելով: Բանկերից և պետական արդյունաբերությունից գյուղատնտեսական կոոպերացիային տրվող վարկերը հիմնված պետք է լինեն գյուղատնտեսական կոոպերացիային մեծագույն չափով նպաստելու և կազմակերպչական ու անտեսական կարելիությունները լիովին ոգտագործելու սկզբունքների վրա:

8. Գյուղատնտեսական վարկը զարգացնելու և ամրապնդելու համար պետությունն ձեռք առած միջոցների շարքում հատուկ կարեվոր դեր են խաղում կենտրոնական և տեղական գյուղատնտեսական բանկերն ու գյուղատնտեսական վարկային ընկերությունները: Անհրաժեշտ է, վոր կենտրոնական գյուղատնտեսական բանկը և տեղական գյուղատնտեսական բանկերն ու գյուղատնտեսական վարկային ընկերություններն իրենց աշխատանքը կատարեն գյուղատնտեսական ու վարկային կոոպերացիայի սիստեմի և հողամրմինների հետ լիովին համաձայնեցրած ձևով ամրացնելով թե ստորին կոոպերացիան և թե կոոպերատիվ միությունների ցանցը:

9. Կենտրոնական գյուղատնտեսական բանկի, տեղական գյուղատնտեսական բանկերի և գյուղատնտեսական վարկային ընկերությունների վարկային գործունեությունը անմիջականապես հենված պետք է լինի գյուղատնտեսական ստորին կարգի վարկային ընկերությունների ցանցի վրա: Ստորին կարգի կոոպերատիվների վարկավորումը պետք է կատարել սովորական բանկային կարգով, դեկավարելով այն սկզբունքով, վոր անհրաժեշտ է թե նրապատահանարմար ուղղությամբ գործադրել վարկը և թե եժանացնել այն: Գյուղատնտեսական վարկային ընկերությունները պետք է ստեղծել առնվազն նահան-

գական (խոշոր գավառների округа) և շրջանային (областной) մասշտաբով: Իրենց գործունեությունն մեջ նրանք կարող են հենվել նաև իրենց բաժանմունքների ու գործակալությունների, ինչպես և գյուղատնտեսական կոոպերացիայի ռաջոնական միությունների վրա:

10. Պետական արդյունաբերության և պետական առևտրի մարմինները պետք է լիովին պայմանադրական սկզբունքներով ոգտագործեն գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցը, գյուղատնտեսական արդյունագործության համար անհրաժեշտ հում նյութը գնելու և արդյունաբերական ապրանքները ռեալիզացիա անելու գործում:

Առևտրի և արդյունաբերության կարգավորման պետական մարմինները պետք է խուսափեն կոոպերացիայի նկատմամբ այնպիսի հրահանգներ տալուց, վորոնք կարող են նրա կողմից վսասաբեր գործարքներ անելու պատճառ դառնալ:

11. Գյուղատնտեսական կոոպերացիան պետք է ոգտագործի արտաքին առևտրի մենաշնորհի որենքի հիման վրա իրեն տրված իրավունքն՝ անկախորեն արտաքին շուկա յեղնելու մասին, վորպեսզի մեծագույն չափերով շահագրգռի ստորին կոոպերացիան և գյուղացիության կոոպերացված մասսան արտաքին առևտրի զարգացման խնդրով:

#### Ֆրեսագործական կոոպերացիայի մասին

I. Տնայնագործական արդյունաբերություն, արհեստագործությունը (промысла) և արհեստները խիստ կարևոր նշանակություն ունեն և դեռ յերկար ժամանակ կունենան ՍՍՀՄ ընդհանուր եկոնոմիայի մեջ: Ներքին (գյուղացիական և քաղաքային) շուկայի կարիքներին ծառայող տնայնագործական արդյունաբերության և արհեստագործության զարգացումը մեկ կողմից նպաստում է

պետական խոշոր արդյունաբերությանը՝ կիսաֆարրիկատներ պատրաստելով ու մշակելով և մյուս կողմից գյուղի հավելյալ բանվորական ուժի ոգտագործման միջոց ու վորոշ շրջաններում գյուղացիության յեկամուտի գլխավոր աղբյուր է հանդիսանում:

Այս պատճառով կուսակցության և պետության ուղաղությունը պետք է ավելի մեծ չափերով, քան մինչև այժմ է յեղել, դարձնել տնայնագործական արդյունաբերության հարցերի վրա և տնայնագործների ու արհեստագործների (ПРОМЫСЛОВИК) կոոպերացման վրա:

Կոոպերացման խնդիրը կարող է հաջողությամբ պրսակվել միայն այն դեպքում, յերբ տնայնագործական՝ արհեստագործական կոոպերացիան առատ գործ տա տրնայնագործին, բարձրացնի նրա դատումը և բարելավի նրա աշխատանքի արտադրական պայմանները:

II. Այս պատճառով իրավականի ասպարիզում անհետաձգելիորեն անհրաժեշտ է՝

1). Հրաժարվել աշխատարար տնայնագործներին և արհեստագործներին անաշխատարար (НЕТРУДОВОЙ) տարրերի շարքը դասելուց:

2). Հնարավորություն տալ նրանց փաստորեն ոգտագործելու իրենց ընտրական իրավունքները:

3). Խորհրդային մարմինների և Խորհրդային հասարակայնության մարմինների աշխատանքին լծել նրանց:

4). Վերապահել արդյունագործության հետ ժամանակավորապես իրենց կապը կտրած տնայնագործ բանվորների արհմիության անդամության իրավունքը:

III. Կազմակերպչական ասպարեզում անհրաժեշտ է վերացնել գոյություն ունեցող արհեստագործական-կոոպերատիվ միավորումների թերությունները հետեյալ կերպով.

1. Արդյունաբերական կոոպերացիայի առանձին ու

ղակները միջև սահմանել փոխարարբերութիւնները և կազմակերպչական կապի միանգամայն հստակ ձևեր:

2. Արհեստագործ բնակչութեան կարիքների փաստական բավարարման տեսակետից՝ ստուգել գոյութիւն ու նեցող կոոպերատիվ միութիւններն, ինչպես խառն տիպի պատկանողներն, այնպես եւ գուտ արհեստագործականները:

3. Ստորին կարգի կոոպերատիվների ցանցի ասպարիզում ստեղծել տնայնագործների և առանձին արհեստագործների մասնաշաղկան միավորման ամենապարզ ձևեր և միևնույն ժամանակ սլայքարել կեղծ-կոոպերատիվներ ստեղծվելու դեմ:

4. Արհեստագործական կոոպերացիայի բոլոր ողակներում ազատիվ աշխատանքի լծել այդ կոոպերացիայի բոլոր անդամներին՝ կամավորութեան, ինքնագործնելութեան և կանոնադրութիւնը խստիվ գործադրելու հիմքերի վրա:

5. Պերիֆերիային մասնակցել տալ գործառնութիւնները ստացվող շահույթներին և ուժեղացնել անդամների նյութական շահագրգռութիւնը ղեպի արհեստագործական կոոպերացիայի աշխատանքը:

6. Կոոպերատիվ աշխատանքն առաջին հերթին կենսորոնացնել տնայնագործական արհեստների կարևորագույն ճյուղերում:

7. Հետևողականորեն կիրառել խիստ անտեսական հաշվարկման սկզբունքը:

8. Ամեն կերպ կրճատել վերադիր ծախսերը:

9. Ուժեղացնել արհեստագործական կոոպերացիայի ստորին կարգի ողակների հրահանգավորումը և նրա կարիքներին կազմակերպչորեն ծառայելը:

10. Հաստատամտութեամբ կյանքի մեջ մտցնել այն սկզբունքը, վոր ամեն մի կոոպերատիվ կազմակերպու-

թիւն լիովին պատասխանատու յե իր վրա վերցրած պարտավորութիւնների համար:

11. Հատուկ ուշադրութիւն դարձնել կին տնայնագործների կոոպերացման վրա:

IV. Արհեստագործական կոոպերացիայի ֆինանսական դրութեան առողջացման համար, այդ կոոպերացիայի սեփական միջոցների ուժեղացումից զատ, անհրաժեշտ է,

1. վոր պետութիւնը բյուջետային և վարկային կարգով հատուկ միջոցներ հատկացնի արհեստագործութեանը, վորպեսզի նպաստի և զարգացնի տնտեսութեան այդ ճյուղը համաձայն այն նշանակութեան, վոր ունի նա ժողովրդական տնտեսութեան մեջ:

2. վոր ուժեղացվի արհեստագործական կոոպերացիային բանկային վարկ տալը, համաձայն յուրաքանչյուր արհեստագործութեան սեզոնների, շրջանառութեան տեղականութեան և այլ առանձնահատկութիւնների:

3. վոր համապատասխան պետարմիները վարկով հում և կիսամշակ նյութեր տրամադրեն արհեստագործական կոոպերատիվ միավորումներին:

V. Տնտեսական ձեռնարկների օտարիզում պետք է՝

1. իրականացնել գյուղի և քաղաքի աշխատարար տնայնագործներին և արհեստավորներին հարկային արտոնութիւն տալու միջոցները:

2. Իրականացնել այն միջոցները, վորոնք նպաստելու յեն տնայնագործական և արհեստագործական արտադրանքների ասպրանքայնացման բարձրացմանը. մասնավորապես նպաստել այդ արտադրանքների արտահանութեանը: Պետք է նպաստել նաև թե Միութեան պետարդյունաբերութեան կողմից, և թե ներմուծման կարգով տնայնագործներին տնայնագործական արդատութեան գործիքներ ու միջոցներ հայթայթելու գործին:

3. Վարել գները այնպիսի քաղաքականութիւն, վոր

նպաստի տնայնագործական և արհեստագործական արտադրանքների եժանացմանը, սակայն չփնտրի տնայնագործի և արհեստագործի նորմալ դատումին:

4. Իրականացնել արհեստագործական կոոպերացիայի հիմնական կապիտալների ընդարձակումն ու կայունացումը և սեփական միջոցների կուտակելը:

5. Խրախուսել, վոր տնայնագործներն իրենց միավորումներին աշխատավորական վարկ տալու գործը զարգացնեն:

6. Անտառագործական կոոպերացիայի նկատմամբ հավասարեցնել նրա իրավունքների հետ՝ անտառամաս ստանալու խնդրում և վերաքննել ծառահարկի (попечной платы) և փայտեղեն ապրանքների տարիֆը:

VІ. Անհրաժեշտ է արհեստագործական կոոպերացիան սերտորեն կապել պետարդյունաբերության հետ: Արդյունաբերության և պետական առևտրի մարմինները տնայնագործների հետ գործ ունենալուց պետք է յեղակետ ընդունեն այն հանգամանքը, վոր անհրաժեշտ են սպաստել տնայնագործական արհեստների զարգացմանը և տնայնագործի հետ քայքայող գործարքներ չանել: Մասնավորապես անհրաժեշտ է սխտեմատիկ կերպով իրականացնել հետևյալը.

1. Միջոցներ ձեռք առնել, վոր պետարդյունաբերությանն ու պետմարմիններին անհրաժեշտ շինվածքների պատվերները տրվեն արհեստագործական կոոպերացիային.

2 վոր պետարդյունաբերությունն իր արտադրանքի լրացուցիչ մշակման և վերջնական պատրաստման համար ոգտագործի արհեստագործական կոոպերացիան.

3. վոր պետարդյունաբերության պլանների մեջ մտցվեն տնայնագործական արդյունաբերության և արհեստագործության հայթայթումների ծրագիրը.

4. վոր անգործության մատնված արդյունաբերական

ձեռնարկները կապալով տալուց առաջնություն տրվի տնայնագործական կազմակերպություններին:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել տնայնագործական արդյունաբերության և արհեստագործությանց վրա ազգային հանրապետությունների մեջ և Միության ծայրամասերում:

### ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Անցած տարին հաստատեց, վոր սպառողական կոոպերացիայի կամավոր անդամության սկզբունքի անցնելն ուղիղ քայլ էր և այդ սկզբունքի անցնելը նպաստեց այն բանին, վոր կոոպերացիան լուրջ և դրական արդյունքների հասավ:

Ներկայումս առաջին հերթին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կոոպերացիայի վորակի լավացման, գոյություն ունեցող կոոպերատիվ ցանցի ամրացման, նրա աշխատանքի խորացման, կոոպերացված բնակչությունն ավելի ակտիվ կերպով սպառողական ընկերությունների աշխատանքին մասնակից անելու և սպառողական կոոպերացիայի հետագա տնտեսական և ֆինանսական առողջացման վրա:

2. Սպառողական կոոպերացիան այսուհետև ել ապրանքը բնակչությանը հասցնող հաստատությունների շրթայի հիմնական գլխավոր ողակը համարելով, պետական արդյունաբերությունը պետք է ապրանքներն առաջին հերթին սպառողական կոոպերացիայի միջոցով վաճառի, մասնավոր կապիտալն ոգտագործելով այն չափով, ինչ ձամբավոր կոոպերացիան անկարող է ամբողջ ապրանջափով վոր կոոպերացիան անկարող է ամբողջ ապրանջաշրջանառությունը միայն իր վրա վերցնել:

Կոոպերացիային անհրաժեշտ է ապահովել վարկի և վճարման ավելի նպաստավոր պայմաններ, քան մասնավոր կապիտալին:

3. Կոոպերատիվ առևտրի ապրանքների ընտրությունն անհրաժեշտ է լիովին համաձայնեցնել բնակչության լայն մասսաների պահանջներին հետ: Այս պատճառով պետական արդյունաբերությունը մոտակա ժամանակների ընթացքում պետք է վերացնի պարտադիր տեսակների (աստորիտիմենտ) սիստեմը և մինչև այդ սիստեմի լիակատար վերացումը, սպառողական կոոպերացիայի և ապրանքների ընտրության խնդրում առաջնահերթության իրավունք տա, ինչպես այդ արվում է պետական առևտրի նկատմամբ:

Կոոպերատիվների անդամների պահանջներին լավագույն կերպով բավարարելու և կոոպերատիվ գործունեություն շարունակելու նպատակով անհրաժեշտ է կոոպերատիվի ապրանքների տեսակներ վորոշելու գործին անմիջական մասնակցություն կանչել կոոպերացված բնակչությանը:

4. Սպառողական կոոպերատիվի հիմնական խնդիրը — կոոպերատիվ շրջանառության հետագա զարգացումը — կարող է իրականացվել միայն այն դեպքում, յերբ կոոպերատիվ առևտուրը կատարվի անփաստաբերության (безысходность) և կոոպերացիայի ստացած վարկերի հանդեպ լիովին պահովելու հիմունքներով:

5. Դրա հետ միասին կոոպերացիան պետք է ապրանքները վաճառի այնպիսի գներով, վորոնք կարող են նրպատել շուկայի միջին գների իջեցմանը և պետք է պայքարի հանուն այն բանի, վոր հնարավորության սահմաններում առավելագույն չափերով նվազեցվի մեծածախսի և մանրածախսի գների միջև յեղած տարբերությունը:

6. Շուկայի գներն իջեցնելուն զուգընթաց կոոպերատիվ առևտրի անփաստաբերության իրականացման կարելի յե հասնել ամենից առաջ վերադիր ծախսերը կրճատելու միջոցով, վորոնք տակավին մեծ են և հետագա կրճատման կարոտ:

Կոոպերացիայի բոլոր մարմիններն անմիջապես պետք է մշակեն և գործադրեն այնպիսի գործնական միջոցներ, վորոնց նպատակը պետք է լինի մեծագույն չափերով և ամենաարագ կարգով կրճատել վերադիր ծախսերը: Մասնավորապես սպառողական կոոպերացիայի ստորին ցանցի վարչություն վարձատրովի անդամների թիվը պետք է նրվազագույնի հասցնել և այն բոլոր դեպքերում, յերբ այդ բանը հնարավոր կլինի, բավարարվել մի վարձատրովի աշխատողով:

7. Սպառողական կոոպերացիայի ընտրովի մարմինները պետք է ըստ ամենայնի հաշվետու և պատասխանատու լինեն իրենց ընտրողների առաջ: Վորպեսզի աշխատանքն այնպիսի հիմունքներով կատարվի, վոր ապահովվի ընտրովի մարմինների լիակատար պատասխանատվությունն այդ աշխատանքի համար — ինչպես և բնակչության վրստահությունը նվաճելու համար — ընտրովի մարմինները պետք է պահպանեն իրենց լիազորություններն այնքան ժամանակ, վորքան վոր սահմանված է կանոնադրությամբ:

8. Սպառողական կոոպերացիայի ամբողջ սիստեմի մեջ անհրաժեշտ է կիրառել գլխավորապես իր անդամի կարիքները բավարարելու սկզբունքը: Այս պատճառով, իր անդամների պահանջները կարելույն չափ լրիվ բավարարելու, ինչպես և նրանց իրական նյութական արտոնություններ տալու նպատակով, այդ անդամների պահանջների հաշվառումը սպառողական կոոպերացիայի հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի:

9. Կուսակցությունից դիրեկտիվների համաձայն, ամբողջապես սպառողական կոոպերացիայի ստորին ցանցը և ցույց տալով նրան ամեն տեսակի ոգնություն, միևնույն ժամանակ անհրաժեշտ է պայքարել կոոպերատիվ միություններն արձամարելու կողմն ուղղված փաստակար թեքման դեմ և ձգտել ուժեղացնելու նրանց կազմակերպ-

չական—հրահանգչական և վերստուգման ֆունկցիաները:

10. Սպառողական կոոպերացիան մինչև այժմ շրջանառութեան արագացման տեսակետից նշանակալից առաջադիմութիւնն է արել: Այս ամենն անհրաժեշտ է այն շրջաններում, վորտեղ շրջանառութեան արագացման խընդիրը գոհացուցիչ չափով է իրականացված. պետք է աշխատել պահպանել կոոպերատիվ շրջանառութեան այդ արագութիւնը և խթանել այդ տեսակետից յետ մնացածներին:

11. Սպառողներին անսխտեմ կերպով վարկավորելու միասակար հետևանքների դեմ պայքարելիս անհրաժեշտ է ձեռք առնել ամենայնպէս անհրաժեշտ միջոցներ, վորովհետև այդ վարկավորումը մեկ կողմից քայքայում է կոոպերացիայի հիմքերը և մյուս կողմից բաժնետերերին ծայր աստիճան ծանր դրութեան մեջ դնում: Մասնավորապէս անհրաժեշտ է վերջ տալ կոոպերացիայի, խորհուրդների և այլ մարմինների պատասխանատու աշխատողների (ընտրովի և վարձովի) կողմից վարկերն ի շարք գործ դնելու յերևույթին: Սակայն թույլատրելի յե համարվում ընդհանրապէս կոոպերացիայի անդամներին վարկավորելն ինչպէս քաղաքում այնպէս էլ գյուղում, մասնավոր յեթե դա արվում է մասնավոր առևտրականների ապրանքավարկի դեմ պայքարելու նպատակով, քանի վոր մասնավոր առևտրականի այդ վարկավորումն ամենուրեք ստրկացման բնույթ է կրում՝ բանվորների և գյուղացիների համար: Շարունակելով բանվորների և գյուղացիների անհատական վարկավորման պրակտիկան կամավոր սկզբունքներով, պետք է աշխատել կարգավորել վարկը, այսինքն ապահովել նրա վճարումը և սահմանափակել վարկը՝ տեսակների ընտրութեան, վարկի չափի և վճարման ժամկետների տեսակետներից:

12. Սպառողական բնույթի ապրանքների ներմուծ-

ման գործին ավելի լայն չափերով մասնակցելու հնարավորութիւնն տալ սպառողական կոոպերացիային:

13. Կոոպերացիայի ֆինանսական դրութեան ամրապնդման համար նախ և առաջ անհրաժեշտ է, վոր բնակչութիւնն իր միջոցներով ավելի մեծ չափերով մասնակցի կոոպերացիային, անհրաժեշտ է դեպի կոոպերացիան գրավել բաժնետիրական և միանվագ մուծանքները, ինչպէս և կուտակել կոոպերատիվ կապիտալները:

14. Սակայն, ընդունելով, վոր ընդարձակվող ապրանքաշրջանառութիւնը պահանջում է ավելի արագ կարգով ավելացնել կոոպերացիայի առևտրական կապիտալը և վոր միայն սեփական միջոցներով մոտ ժամանակներում նա անկարող կլինի բանին հասնել,— անհրաժեշտ է ավելացնել ստորին կոոպերացիայի հիմնական և շրջանառու կապիտալներն՝ այդ նպատակով պետական բյուջեյից յերկարատև ժամանակով փոխառութիւնն տալով: Դրա հետ միասին անհրաժեշտ է, վոր վարկային և առևտրական կազմակերպութիւններն ևս, կոոպերացիայի շրջանառութեան և սեփական միջոցների չափը նկատի առնելով, ավելացնեն կոոպերացիային տրվող վարկը:

15. Վարկերի վճարման ժամկետներն ու պայմանները պետք է համաձայնեցվեն ապրանքների շրջանառութեան ժամանակամիջոցների և այն շրջանի պայմանների հետ, վորտեղ գտնվում է վարկավորելիք կազմակերպութիւնը:

Կոոպերացիայի վարկավորման պարտադիր պայման պետք է լինի՝ վարկային կարգապահութեան անշեղ գործադրումը, վարկավորվող կազմակերպութիւնների և նրանց ղեկավարների լիակատար պատասխանատվութիւնը վարկերի նպատակահարմար ոգտագործման համար, իրենց պարտավորութիւնների ժամանակին կատարելը. բացի այդ, պետք է նկատի առնել վարկառու կազմակերպութիւնների վարկունակութիւնը:

### 3. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՄՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մեկ կողմից պետական արդյունաբերության բոլոր ճյուղերի վերականգնումն ու ամրապնդումը և զրա հետ կապված այդ արդյունաբերության արտադրության ավելացումն ու ապրանքների գների իջեցնելը և մյուս կողմից գյուղատնտեսության վերականգնումն ու ամրապնդումը, վորին հետևում է նրա ապրանքայնացման ու ժեղանալն ու գյուղացիության գնողունակության աճելը՝ ծավալեցին ու ամրացրին յերկրի տնտեսական շրջանառությունը: Սա առաջին հերթին և ամենից վառ կերպով անդրադարձավ պետական բյուջեյի կառուցման և չափի մեջ: Պետական յեկամտի ընդհանուր գումարը տարեցտարի անշեղորեն աճում է. տարի-տարու վրա անշեղորեն աճում են հարկային և վոչ-հարկային գանձումները. մինչդեռ եմիսիան, վոր ընթացիկ յեռամյակի առաջին տարում բոլոր բյուջետային գանձումների մոտ մի յերրորդականն եր կազմում, այս տարվա բյուջեյում այլևս տեղ չունի: Վոչ մի կաժկածի յենթակա չե ժողովրդական տնտեսության հետագա աճումը և զրա հիման վրա— պետական բյուջեյի հետագա ամրացումն ու աճումը:

2. Իրամական ռեֆորմը կիրառելու և հաստատուն վայրուտա մտցնելու հետեվանքն այն յեղավ, վոր վերացավ եմիսիոն հարկը և բնակչության համար թեթեվացավ հարկային պարտավորություններ կատարելը:

Պետության ֆինանսական կարելիությունների աճումը հնարավորություն է տալիս այժմ և յեթ դնելու այն հարցը, վոր անհրաժեշտ է ավելի թեթեվացնել հարկերի ծանրությունը՝ պետական հարկ վճարողների վորոշ կատեգորիաների համար:

Յերկրի ընդհանուր շահերը, նրա պաշտպանության, կուլտուրական պահանջների և տնտեսական կարիքների

բավարարման համար արվող պետական ծախսերի անխուսափելի աճումը, պահանջում են մեծագույն զգուշավորություն մոտենալ այդ հարցին. սակայն պետական ֆինանսների զրուծյունը նկատի առնելով, կուսակցությունն այնուամենայնիվ գյուղացիության շահերի տեսակետից անհրաժեշտ և հնարավոր է համարում իր ուշադրությունն առաջին հերթին դարձնել միասնական գյուղատնտեսական հարկի վրա: Ինտենսիֆիկացիայի, ինչպես և անասնաբուծության ու տեխնիքական մշակութների զարգացման ուղին բռնած գյուղատնտեսության ասպարեզում կուտակման պրոցեսը հեշտացնելու նպատակով, ժամանակակից գյուղատնտեսության պայմաններին ու խնդիրներին համապատասխանող ինվենսարով, մեքենաներով, գործիքներով, բեղմնավորիչներով (плетенной материал), կուլտուրական սերմերով և այլ պարագաներով ապահովելու խնդրում գյուղացիության գործը թեթեվացնելու նպատակով— կուսակցությունը հնարավոր է գտնում զալիք բյուջետային տարուց սկսած՝ նշանակելի չափերով իջեցնել միասնական գյուղատնտեսական հարկի ընդհանուր գումարը, հարկի ընդհանուր կոնտինգենտը մինչև 280 միլիոն ռուբլու հասցնելով, և ուղիղ է համարում ՍԽՀՄ ժողկոմխորհի և Միության կենտգործկոմի վերջին նստաշրջանի այս առթիվ արած վորոշումները:

Կուսակցությունն ուղիղ է համարում նաև Միության կենտգործկոմի վորոշումն այն մասին, վոր անհրաժեշտ է միասնական գյուղատնտեսական հարկի ստացումներից (поступления) 100 միլիոն ռուբլի հատկացնել վոլոստային բյուջեներին, վերջիններս ամրացնելու և վորոստի քաղաքական ու տնտեսական զարգացմանը նպաստելու համար:

3. Միասնական գյուղատնտեսական հարկի կիրառման փորձն ընթացիկ բյուջետային տարում ցույց տվեց,

վոր անհրաժեշտ է որենքի մեջ անմիջապես մտցնել այնպիսի բարեփոխութիւններ, վոր դրանցով վերանա՝ հարկի ծանրութիւնը վճարողներին միջև անճիշտ բաշխելու հնարավորութիւնը և հարկի չափը լիակատար կերպով համապատասխանի տնտեսութիւնների կարողութեանն ու գյուղատնտեսութեան պայմաններին և առանձնատկութիւններին, պայմանով.—

Վոր տուրքադրման պրոգրեսիան՝ լիովին ապահովելով չքավորների և միջակների շահերը, գյուղացիական տնտեսութեան հետագա զարգացման հնարավորութիւններ ստեղծի.

Վոր անասուններին վարելահողի հաշվարկելը չկասեցնի անասնապահութեան զարգացումը.

Վոր տուրքադրման նորմերի սահմանման ժամանակնու յեղանակը հնարավորութիւն տան գյուղացուն վաղորոք հաշվելու իր վճարելիք հարկի գումարը, և վերացվի ցածր բերք տվող շրջանների հարկի չգանձված մասը միջին և բարձր չափի բերք ունեցող շրջանների բերքի հաշվին ծածկելու յերևույթը.

Վոր մեկ անգամ սահմանված ժամկետները և այդ ժամկետներին մուծելիք հարկի տոկոսները չփոխվեն և այդպիսով չխախտվի տնտեսութեան պլանաչափութիւնն ու գյուղացին այնպիսի դրութեան մեջ չընկնի, վոր իր աշխատանքի արտադրանքն ստիպված լինի անակնկալ, անժամանակ, շտապ և փաստակար ևեալիզացիայի յենթարկել.

Վոր որենքի հիման վրա տրվող արտոնութիւնները գործադրվեն հարկը հավաքելուց առաջ և վոչ թե նրանից հետո:

Այս պատճառով, կուսակցութիւնն ուղիղ է համարում նաև Միութեան կենտրոնի բոլոր այն վորոշումները, վորոնց նպատակն է նշված բարենորոգումները մտցնել գործող որենքի մեջ:

4. Միասնական գյուղատնտեսական հարկի կիրառման պրակտիկան հայտնաբերեց որենքի և կառավարական բարձրագույն հաստատութիւնների կարգադրութիւնների խախտման մի շարք դեպքեր, վոր թույլ են տվել տեղական գործադիր մարմինները: Կուսակցութիւնը պետական իշխանութեան առաջ հաստատուն կերպով դնում է մի խնդիր—պաշտպանել հարկատուի շահերը և պահպանել նրա տնտեսութեան ամբողջութիւնը: Գտնելով, վոր քրեական կոդեքսի 79 և 80 հոդվածներով, հարկը հավաքելու անվիճելի կարգով և ժամանակն անցրած հարկ վճարողների վրա չափավոր *пеня* նշանակելով լիովին ապահովվում են պետգանձարանի շահերը և հարկի ժամանակին վճարելը,—կուսակցութիւնը ժամանակն է համարում վոր, կառավարութիւնը հատուկ կարգադրութեամբ վերացնի հարկի հավաքման ժամանակ անճշտապահ վճարողների վրա հարկի հավաքման ժամանակ անճշտապահ վճարողների վրա ստուգանք նշանակելը, նրանց ձերբակալման դիմելը և որենքի մեջ ճշտիվ ու ուղղակի չնշված վարչական ներգործման (*взыскание*) այլ միջոցների գործադրելը: Բացի այդ, կուսակցութիւնն անհրաժեշտ է համարում վերաքննել տան առորյա գործածութեան առարկաների, գյուղատնտեսական գործիքների ու ինվենտարի, բնակելի և տանը կից շենքերի (*служебные строения*) ցուցակը, վորոնց չի կարելի վճարել անճշտապահ հարկ վճարողից գանձելիք հարկը ծածկելու համար: Վերաքննութեան նպատակը պետք է լինի լիովին ապահովել տնտեսութեան ամբողջութիւնն ու անկորուստ պահպանումը:

5. Կուսակցութիւնը ձգտում է տնտեսութեան կարողութիւնն ու վճարունակութիւնը վորոշող բոլոր տրվող յայնքերը հաշվի առնելու միջոցով ապահովել այն, վոր տուրքադրման ծանրութիւնը համապատասխանի յուրաքանչյուր տնտեսութեան յեկամտի ու կարողութեան չափին, ցանկանում է այնպես անել, վոր հարկի ծանրու-

թյունը արդարացի կերպով բաշխվի գյուղացիութայն տարբեր խավերի միջև՝ համաձայն նրանց բարեկեցութայն աստիճանի և գյուղացիական տնտեսութայն առանձնահատկությունները՝ ըստ շրջանների. գյուղատնտեսութայն ընդարձակման և կատարելագործման նպատակով, ձգտում ե խրախուսել և ապահովել առողջ կուտակման պրոցեսը գյուղացիական տնտեսութայն ներսում. այս պատճառով կառավարությունը պետք ե նպատակ դնի արմատակա նապես բարելավել ուղղակի տուրքագրման սխստեմը գյուղում: Կոնֆերենցիան կուսակցութայն Կենտկոմի ուշադրությունն ե հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ ե մշակել և հերթական կուսակցական համագումարի քննութայնը ներկայացնել գյուղատնտեսական հարկի նոր որենքի հիմնական կետերը, — մի որենք, վոր փորձի հիման վրա պետք ե հաշվի առնի գյուղացիական տնտեսութայն բազմաբարդությունն ու բազմապիսությունը Միութայն յերկրում, ապահովի գյուղատնտեսութայն անարգել զարգացումը և հնարավորություն տա պաշտպանելու գյուղում այն խավերի շահերը, վորոնք (խավերը) Խորհրդային իշխանութայն հենարանն են:

4. ՄԵՏԱՂԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Մետաղարդյունաբերութայն 1924 — 25 թ. ծրագիրն անհրաժեշտ ե ընդարձակել նախնականի համեմատությամբ 26 տոկոսով, այսինքն արտադրությունը հասցնել 349,773,000 նախապատերազմյան ուրբլու, այդ թը՝ վանշանների ճշգրտելը համապատասխան մարմինների վրա դնելով:

2. Տրանսպորտի վերականգնումը պահանջում ե առաջիկա ոպերացիոն տարում նշանակելի չափերով ընդարձակել տրանսպորտին մետաղ հայթայթելու գործը:

Վորպեսզի այս ավելացրած հայթայթումն այս իսկ

կիսամյակում արգելքների չհանդիպի, անհրաժեշտ ե ձեռք առնել տրանսպորտի համար աշխատող գործարանների հարմարեցման բոլոր նախապատրաստական միջոցները: Այս նպատակով անհրաժեշտ ե արագացնել արանսպորտին մետաղ հայթայթելու գալիք տարվա պլանի հաստատումը:

3. Անհրաժեշտ ե ձեռք առնել և ծավալել մի շարք միջոցներ, զարգացնելու և ոժանդակելու համար տնայնագործական արդյունաբերությունն ընդհանրապես, մետաղարդյունաբերությունը մասնավորապես, — նրանց հում և կիսամշակ նյութեր ու զազգյաններ հայթայթելու, նրանց արտադրանքն ու շինվածքները սպառելու, նրանց համար պահեստներ, վարկ ստեղծելու, նրանց կոոպերացումը խրախուսելու և գործարանների հետ նրանց փոխհարաբերությունները կանոնավորելու խնդրում: ՍԽՀՄ Ժողովրդ. Տնտ. Գեր. Խորհուրդն այս աշխատանքը ղեկավարելու համար, իր կազմում պետք ե ունենա մի ուժեղ ու հեղինակավոր մարմին և գործի, իր գործունեյությունը լիովին համաձայնեցնելով արհեստագործական կոոպերացիայի գործունեյութայն հետ:

4. 1924 — 25 տարին, յերբ այդպես նշանակելի կերպով ե ընդարձակվել արտադրությունը, պետք ե վերացնի մի շարք տրեսանների վրասաբերությունը, և այդ բանը, միայն ԺՏԳԽ, ալ և կուսակցական ու արհեստակցական մարմիններին:

5. Շինվածքների վորակի լավացմանը զուգընթաց ինքնարժեքն իջեցնելը արդյունաբերութայն համար հիմնական խնդիրն ե հանդիսանում նաև հետագայի համար: Խնդրին այս տեսակետից մոտենալով ե վոր պետք ե գնահատել ինչպես մետաղարդյունաբերութայն գլխավոր վարչութայն (Главметалл) ու տրեսանների ղեկավարների, այնպես ել գործարանների գործունեյությունը:

6. Աշխատանքի արտադրականութայն բարձրացման և

աշխատավարձի ասպարիզում անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցներն, ոգտագործելով թե հատկացված միջոցները և թե բանվորների մեջ նկատվող յեռանդի բարձրացման կամպանիայի հաջողութունն՝ արդյունագործության կազմակերպության բարելավման, տեխնիքական կատարելագործումներ մտցնելու, մաշված սարքավորումը նորով փոխելու, արդյունագործության և մանավանդ ուժանգակ աշխատանքի ու փոխադրության մեքենացման, սպեցիալիզացիայի անշեղ ծավալման միջոցով և այլն, և այլն, և սխտեմատիկ կերպով ու անշեղորեն մինչև նորմալ չափը բարձրացնելով աշխատավարձը հետամնաց ճյուղերում ու շրջաններում, առաջին հերթին այդ բանի հիմք ծառայեցնելով արտադրականության բարձրացումն:

7. Տեխնիքական պերսոնալի նկատմամբ, առաջնահերթ խնդիր համարել հետևյալ հարցերի լուծումը. մինչ — արտասահմանյանի աստիճանի բարձրացնել կվալիֆիկացիան, ավելացնել կադրերը, ուսուցման գործը կապել ժՏԳՍ և արդունաբերության հետ, բարելավել ու կարգավորել աշխատանքի պայմանները և արդյունաբերական կառավարության ու ղեկավարման ընդհանուր սխտեմալ գրությունը:

8. Բանվորական բնակարանների շինարարության ասպարիզում անհրաժեշտ է ուշադրությամբ հետևել նախագծված ծրագրի լրակատար իրագործմանը, վոր պետք է կատարվի տրեստների ու գործարանների վարչությանց պատասխանատվությամբ, սակայն պայմանով, վոր հատկացված գումարներն անտնտեսաբար կերպով չծախավեն և տան առավելագույն արդյունքներ: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, ինչպես տնտեսական, այնպես ել կուսակցական ու արհեստակցական գծով, այն բանի վրա, վոր շինարարարության ասպարիզում մինչև որս ծայրահեղ անտնտեսարարություն և անկանոնություն է տիրում:

9. Առաջնահերթ խնդիր համարել մետաղի շինվածքների վրա մանրածախսի ժամանակ անշափ բարձր վերագիրներ նշանակելու դեմ պայքարելը ու լավացնել գյուղին մետաղ հասցնող ասպարատները, ստեղծելով հատուկ պահեստներ, կրճատելով մետաղե շինվածքների ճանապարհը գործարանից մինչև սպառողը և շինվածքները հարմարեցնելով դյուրացիական շուկայի պահանջներին: Այս խնդրի լուծումը պետք է դնել ժՏԳՍ, Ներքառնողկոմատի և կոոպերացիայի վրա:

10. Մետաղարդյունաբերության պերսպեկտիվայի պլանի ստեղծման ասպարիզում անհրաժեշտ է դեռ ևս այստարի մշակել և ուրվագծորեն (ориентировочно) հաստատել նոր մետաղագործարաններ կառուցելու և կառուցման գործը կազմակերպելու ու գործարանների գտնվելու շրջանն ընտրելու յեռամյա պլան: Մետաղարդյունաբերական նոր գործարանների կառուցումն անհրաժեշտ է առաջնահերթ խնդիր համարել:

## 5. ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՈՐԻՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունելով, վոր պրոլետարական պետության ամբողջական և կուսակցության այժմյան քաղաքականության հետևանքով դյուրացիական լայն մասսաների դեպի այդ պետությունն ունեցած վստահության հետագա աճման շահերը պահանջում են առավելագույն չափերով ամբողջանել հեղափոխական որինապահությունը, մանավանդ իշխանության ստորին մարմիններում, կոնֆերենցիան վորոշում է.

ա) Այս խնդիրը ներկա մոմենտում Խորհրդային իշխանության առաջ կանգնած հիմնական խնդիրներից մեկը համարելով, հավանություն հայանել այս խնդիրը դնելու նկատմամբ կվճ հանդես բերած նախաձեռնությանը:

բ) Հանձնարարել կենտկոմին և կվճ, վոր Լենինի՝

առէն թվի ապրելի 23-ին հրապարակած նամակում արտահայտած ցուցումները և ընկ. Սոյցի զեկուցման հիման վրա՝ մշակեն հեղափոխական որինապահության ամբացման համար անհրաժեշտ բոլոր կազմակերպչական ձեռնարկումները, դրանց գործադրումը խորհրդային կարգով կատարելով:

6. Թե ԻՆՁ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԿԱՆԳՆՈՒՄ ԿՈՍԻՆՏԵՐՆԻ ՅԵՎ ՌԿԿ (Բ) ԱՌԱՋ՝ ԿՈՍԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՍԻ ԸՆԴԱՅՆՎԱԾ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇԵՏԵՎԱՆՔՈՎ

Հայխանություն հայտնել ՌԿԿ (Բ) Կենտկոմի թեզիսներին, վորոնք վերաբերվում են Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումի վորոշումների հետևանքով Կոմինտերնի և ՌԿԿ (Բ) առաջ կանգնած խնդիրներին: Անվերապահորեն միանալ Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումի վորոշումներին և հավանություն հայտնել այդ պլենումի ՌԿԿ (Բ) պատվիրակության վարքագծին:

ՌԿԿ (Բ) XIV-րդ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԹԵԶԻՍՆԵՐԸ՝ ԿՈՍԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՍԻ ԸՆԴԱՅՆՎԱԾ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ.

1. Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումը թեմասնակցողները կազմի և թե իր քննած հարցերի կարեւորության տեսակետից կոնգրեսի նշանակություն ունեւ: Կոմինտերնի Գործկոմի վերջին ընդլայնված պլենումում քննված և ընդունված ամենազխրավոր դոկումենտները սրանք են.

- ա) Թեզիսներ բուլեզիկացման մասին, վորոնք լենինիզմի տեսակետով կոնկրետացնում են V-րդ կոնգրեսի առաջ քաշած տվյալ պայմաններում և մի շարք յերկրները վերաբերվող՝ բուլշևիկացման ընդհանուր լոզունգը:
- բ) Թեզիսներ գուղացիության մասին, վորոնք տեսա-

կանորեն և քաղաքականապես զարգացնում են Կոմինտերնի տեսակետն այն մասին, թե ինչ դեր ունի գյուղացիությունը ներկա շրջանում.— իսկ առանց այդ տեսակետների պրակտիկ գործադրման՝ չկա իսկական բուլշևիկացում.

գ) Բանաձևեր այն մասին, թե ինչ դրություն է տիրում Կոմինտերնի առանձին կարևորագույն հատվածներում (Ամերիկա, Իտալիա, Չեխո-Սլովակիա և այլն), մանավանդ Չեխո-Սլովակյան կուսակցության լիկվիդատորական թեքման մասին և այլն.

դ) Այն բանաձևը, վորով պարսավանք է հայտնվում Բրանզերի, Ռադեկի և Տալգեյմերի խմբակին, վորպես Կոմինտերնի ներսում կազմված աշակողմյան խմբակի:

2) Այն կարևորագույն թեմաները, վորոնք շոշափվել են վորպես Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումի աշխատանքների հետ կապված թեմաներ—սրանք են:

ա) Կապիտալիզմի կայունացումը, վոր վորոշ սահմաններում ընդունված է Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումի կողմից.

բ) Միջազգային հեղափոխության գանգաղումն ինչպես է ազդելու ՍեւշՊ հետագա բախտի վրա:

Ահավասիկ այսպես է դրված հարցն ամբողջ միջազգային կապիտալիստական և սոցիալ-դեմոկրատական մամուլում: Այսպես է դրվելու նա նաև մեր սեփական կուսակցության ու յերկրի լայն շրջաններում:

3) «Հեղափոխությունը կարող է բաղկանալ և հավանորեն կը բաղկանա բազմամյա պատերազմներից, հարձակման մի քանի շրջաններից, վորոնք կընդմիջվեն բուրժուական կարգերի հակահեղափոխական գալաթումներով» (Լենին, «Պ. Բ. Արսելոդի բրոշյուրի մասին»):

Համաշխարհային հեղափոխության զարգացման ընթացքը ներկայումս ամբողջապես հաստատում է այս թեզիսը, վոր դրել է ընկ. Լենինը դեռևս 1915 թվին:

4. Պետք է տարբերել իրարից՝ ա). հեղափոխական սխտուացիան առհասարակ, բ). անմիջական — հեղափոխական սխտուացիան և գ). ուղղակի հեղափոխութեանը՝ «Մարքսիստի համար անկասկածելի յի, վոր հեղափոխութեանն անկարելի կլինի առանց հեղափոխական սխտուացիայի, սակայն ամեն մի հեղափոխական սխտուացիա հեղափոխութեան չի հասցնում»: Այսպես եր ասում ընկ. Լենինը՝ դեռևս 1915 թվին («II. բդ ինտերնացիոնալի սնանկութեանը»):

Հետևյալ որինակները պարզում են խնդիրը:

Գերմանիայում հեղափոխական սխտուացիան սկսեց ստեղծվել մոտավորապես 1914—1915 թ., 1917—1918 թ. ստեղծվեց անմիջական հեղափոխական սխտուացիան 1918 թվի վերջերին անմիջական հեղափոխական սխտուացիան փոխվեց հեղափոխութեան. սակայն այդ հեղափոխութեանը վոչ թե հաղթական պրոլետարական, այլ բուրժուական հեղափոխութեան ձև ընդունեց: 1920-ից մինչև 1923 թիվը անմիջական հեղափոխական սխտուացիան տեղի տվեց պարզապես հեղափոխական սխտուացիային: 1920 թ. Գերմանիայում ստեղծվում է անմիջական հեղափոխական սխտուացիա, սակայն դա հեղափոխութեան չի փոխվում: 1925 թ. Գերմանիայում անմիջական հեղափոխական սխտուացիա չկար, բայց ընդհանուր հեղափոխական սխտուացիան մնում է:

Ռուսաստանում հեղափոխական սխտուացիան ստեղծվեց 1901—1902 թ. թ. միանգամայն վորոշ կերպով: 1904—1905 թ. թ. արդեն անմիջական հեղափոխական սխտուացիա կար, վորը 1905 թվի վերջերին ուղղակի հեղափոխութեան փոխվեց (վորը, սակայն, չհաղթանակեց): 1906—1907 թ. բոլշևիզմը շարունակում էր սխտուացիան անմիջական հեղափոխական համարել: Բայց որինակ 1908-ից մինչև 1916 թիվը բոլշևիզմը գտնում էր, վոր Ռուսաստանում անմիջական հեղափոխական սխտուացիա այլևս

չկա, բայց ընդհանուր հեղափոխական սխտուացիան, վորն անխուսափելիորեն կդի յե յեկուրդ հեղափոխութեամբ, կա: 1908-ից մինչև 1911 թիվը թվում էր, թե ինքնակալութեանը կայունանում է: Ստոլիպինյան հողային քաղաքականութեանը բոլշևիզմը բնորոշում է յին վորպես «յեվս մի քայլ, վոր արվում է ցարիզմը բուրժուական միապետութեան վերածելու համար»: Բայց, չնայած դրան, ընդհանուր հեղափոխական սխտուացիան մնում էր: Յեվ բոլշևիզմը իրենց վոչ զործելակերպն յերկրորդ հեղափոխութեանը կանխատեսելու վրա է յին հիմնում: 1916 թվից սկսեց ըստեղծվել անմիջական հեղափոխական սխտուացիա, վորը 1917 թվին հեղափոխութեան փոխվեց:

Մեծ Բրիտանիայում ըստ յերեվոլյութին միայն այժմ է, վոր սկսում է ընդհանուր հեղափոխական սխտուացիա ըստեղծվել (ընդամին առանձնապես կարևոր դեր է խաղում այն հարցը, թե ինչ դրութեան է տիրում զաղութներում) բայց միանգամայն պարզ է, վոր այս յերկիրը դեռևս հեռու յե անմիջական հեղափոխական սխտուացիայից: Յեվ այլն, և այլն:

Իր «Պրոլետարական հեղափոխութեան և ռենեզատի. Կառուցկի» գրքույքում ընկ. Լենինը դեռևս 1918 թվին «բռնեց» Կառուցկու «սխալը», վոր դեռևս 1909 թվին («Путь к Власти») և նույնիսկ 1902 թվին («Սոցիալական հեղափոխութեանը») ընդունում էր, վոր Յեվրոպայում սբյեկտիվ հեղափոխական սխտուացիա յե տիրում: «Պատերազմից շատ առաջ բոլոր մարքսիստները, բոլոր սոցիալիստները համակարծիք էին այն բանում, վոր յեվրոպական պատերազմը հեղափոխական սխտուացիա յե ստեղծելու: Յերբ Կառուցկին դեռևս ռենեզատ չէր, նա պարզ ու վորոշ կերպով խոստովանում էր այդ—և՛ 1902 թվին («Սոցիալական հեղափոխութեանը»), և 1909 թ. («Путь к Власти»)․․․ Հետևապես Յեվրոպայում հեղափոխական սխտուացիան

տուլացիայի սպասելը վոչ թե բոլշևիկներին հափշտակութեան արդյունք եր, այլ բոլոր մարքսիստներին ընդհանուր հափշտակութիւնն: Այսպես է գրել ընկ. Լենինը:

Այս տեսակետից ընդհանուր հեղափոխական սիտուացիան համաշխարհային մասշտաբով կանախ ներկայութեամբ, այն էլ շատ ավելի վորոշակի արտահայտված. ա) տնտեսական ներհակութիւնները, վորոնք 1914—1918 թվերին առաջին իմպերիալիստական պատերազմին հասցրին, չեն լուծված և չեն կարող լուծվել այլ կերպ, քան համաշխարհային պրոլետարական հեղափոխութեամբ. բ) բուրժուական Յեվրոպան հղի յե նոր իմպերիալիստական պատերազմներով. գ) բացի այդ զարթնել է Արևելքը, և այժմ մենք վորոշ չափով իրավունք ունենք խոսելու որչեպիք հեղափոխական սիտուացիայի մասին վոչ թե միայն Յեվրոպայում, այլ և Ասիայում. դ) առաջին հաղթական պրոլետարական հեղափոխութիւնն ամբողջ է մի տերիտորիայում, վոր վողջ յերկրագնդի մեկ վեցերորդական մասն է կազմում. ՍՍՀՄ գոյութիւնն իսկ շարունակում է հեղափոխականացնել վողջ աշխարհը:

Կոմիսներնի Գործկոմի ընդարձակված պլենումն իր վորոշումներով ասեց միայն այն, վոր անհրաժեշտ է—հեղափոխական սիտուացիա ավյալ մոմենտում չկա Յեվրոպայում (Գերմանիա): Իսկ առհասարակ հեղափոխական սիտուացիան անպայման մնում է:

5. Միանգամայն ճիշտ լինելու համար, մենք պետք է խոսենք վոչ թե մի կայունացման այլ յեկու կայունացման մասին: Բուրժուական Յեվրոպայի կապիտալիզմի մասնակի կայունացմանը զուգընթաց, սեղի յե ունենում պետական արդյունաբերութեան անկասկածելի աճում և ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական տարրերի ու ժողովրդական ՍՍՀՄ: Յեթե կա իտալիստական տնտեսութեան կայունացման կողքին չլինել տնտեսութեան աճումը

ՍՍՀՄ կամ յեթե այդ տնտեսութեան աճումն ունենար խիստ դանդաղ ընթացք, կամ, վերջապես, յեթե ՍՍՀՄ տնտեսութեան ընդհանուր բարձրացման հետ միասին բավարար չափով չաճելին տնտեսութեան սոցիալիստական տարրերն,— այն ժամանակ մենք կանգնած կլինեյինք այն իրական վտանգի փոռ, վոր ներկայութեամբ ստեղծված ժամանակավոր հավասարակշռութիւնը կհաստատվեր հոգուտ համաշխարհային բուրժուազիայի:

Բայց այդպիսի բան չկա: Կան բոլոր հիմքերը հուսալու, վոր յեթե պահպանվի միջազգային պրոլետարիատի կողմից ցույց տրվող այն ոգնութիւնը, վորն արդեն ապացուցված է Տ.Նամյա վորձով,— ՍՍՀՄ սեփական ուժերով էլ կկարողանա արտահեռ ևս հաջողութեամբ բարձրացնել իր տնտեսութիւնը, շարունակելով համաշխարհային հեղափոխութեան աճման ամենալուրջ ֆակտորի դեր կատարել և շարունակելով ոգնել այլ յերկրներին բանվորներին՝ իրենց պրոլետարական հեղափոխութիւնը նախապատրաստելու գործում:

Ընկ. Լենինը սովորեցրել է մեզ անել «առավելագույնն՝ այն ամենն, վոր հնարավոր է իրականացնել մի յերկրում, հեղափոխութիւնը բոլոր յեկրներում զարգացնելու, բոլոր յերկրներում հեղափոխութեան զրդելու և նրանց ոժանդակելու համար»:

Ներկա պայմաններում այդ խնդիրը Ռկկ համար նշանակում է—ուրիշ յերկրներում հեղափոխական շարժումներին ուղղակի ոժանդակելուց սկսած մինչև մեր յերկրում գյուղացիութեանն հեղափոխութեան չիթ տալը: Այսինքն աշխատել ՍՍՀՄ սոցիալիստական տնտեսութիւնն ստեղծելու համար և միևնույն ժամանակ ամեն կերպ ոգնել պրոլետարական հեղափոխութեան գործառններին բոլոր յերկրներում:

6. «Տնտեսական և քաղաքական անհամաչափութիւն»

նից», վորը «կապիտալիզմի անժխտելի որենքն է», ընկ-  
 ւենինն իրավացիորեն հանում էր յերկու յեզրակացու-  
 թյունն ա) հնարավոր է սոցիալիզմի հաղթանակն սկզբում  
 փոքրաթիվ, կամ նույնիսկ մի անանձին կապիտալիստական  
 յերկրում» և բ) հնարավոր է, վոր այդ փոքրաթիվ կամ  
 նույնիսկ մեկ յերկիրը, պարտավորապես ամենագարգա-  
 ցած կապիտալիզմի յերկիր չլինեն (Տես. մանավանդ Լե-  
 նինի գրածը Սուխանովի մասին):

Ռուսական հեղափոխության փորձն ապացուցեց, վոր  
 այդպիսի առաջին հաղթանակը մի յերկրում վոչ թե միայն  
 հնարավոր է, այլև մի շարք բարենպաստ պայմաններ  
 լինելու դեպքում հաղթական պրոլետարական հեղափոխու-  
 թյան այդ առաջին յերկիրը կարող է (յեթե միջազգային  
 պրոլետարիատը վորոշ չափով ոժանդակի) դիմանալ և յեր-  
 կար ժամանակով ամրանալ իր դիրքերում, նույնիսկ այն  
 դեպքում, յեթե այդ ոժանդակությունն ուղղակի պրոլե-  
 տարական հեղափոխության չփոխվի այլ յերկրներում:

Բայց լենինիզմը միևնույն ժամանակ ուսուցանում է,  
 վոր սոցիալիզմի վերջնական հաղթանակը, վորպես բուր-  
 ժուական հարաբերութ ունենրի վերականգնումից ապա-  
 հով մնալու լիակատար յերաշխիք, հնարավոր է միայն մի-  
 ջազգային մասշտաբով (կամ մի քանի վճռական դեր խա-  
 ղացող յերկրներում):

«Ռուսական պրոլետարիատը չի կարող միայն իր ու-  
 ժերով հաղթական ավարտան հասցնել սոցիալիստական հե-  
 ղափոխությունն: Բայց նա կարող է ուսական հեղափո-  
 խությանն այնպիսի թափ հաղորդել, վորն այդ հե-  
 ղափոխության համար կատեղծի յավազուն պայմաններ,  
 վորը վորոշ տեսակետով կսկսի այդ հեղափոխությունը:  
 Նա կարող է թեթևացնել գոյություն ունեցող պայման-  
 ները, վորպեսզի իր գլխավոր, ամենահուսալի աշխատակի-  
 ցը— լեվոպական և ամերիկյան սոցիալիստական պրոլե-  
 տարիատը— վճռական ճակատամարտեր սկսի»: (Լենին,  
 1917 թ. «Նամակ շվեյցարական բանվորներին»):

«Յեթե համաշխարհային պատմական տեսակետով մո-  
 տենանք հարցին, կոեանենք, վոր վոչ մի կասկածի յեն-  
 թակա չէ այն հանգամանքը, վոր մեր հեղափոխության  
 վերջնական հաղթանակը, յեթե նա (մեր հեղափոխությունը)  
 միայնակ մնա, յեթե հեղափոխական շարժումներ չլի-  
 նեն այլ յերկրներում, — անհուսալի կլինի»: (Լենին, հատ.  
 XV, էջ 129, 1918 թ.):

«Յերբ յերեք տարի սրանից առաջ մենք Ռուսաստա-  
 նի պրոլետարական հեղափոխության հաղթության պայ-  
 մանների ու խնդիրների հարցն ելինք դնում, մենք միշտ  
 ասում ելինք, վոր այդ հաղթությունն ամուր չի կարող  
 լինել, յեթե նրան չոժանդակի պրոլետարական հեղափո-  
 խությունն Արևմուտքում, վոր մեր հեղափոխության ճիշտ  
 գնահատումը հնարավոր է միայն միջազգային տեսակե-  
 տից: Վորպեսզի այնպես անենք, վոր հաստատուն  
 կերպով հաղթենք, մենք պետք է աշխատենք պրոլետա-  
 րական հեղափոխության հաղթանակի հասնել բոլոր, կամ  
 գոնե մի քանի գլխավոր կապիտալիստական յերկրներում»:  
 (Լենին, հատ. XVIII, մ II-րդ, էջ 189, 1920 թ.):

Լենինիզմի այս հիմնական թեզիսն ամբողջապես ճիշտ  
 է նաև այժմ:

7. Իսկ ինչ վերաբերվում է միջազգային սոցիալիս-  
 տական հեղափոխության զարգացման ժամկետներին, պետք  
 է ասել, վոր այս ասպարիզում կոնկրետ պատմական փր-  
 ձառություն չունենալով, Ռեկ չէր կարող— մանավանդ  
 մեր հեղափոխության սկզբին— սխալ հաշիվներ չանել:

Կար ժամանակ (1918 թ.), յերբ մենք բոլորս սպա-  
 սում ելինք, թե պրոլետարական հեղափոխության հաղ-  
 թանակ է տեղի ունենալու Գերմանիայում և մի քանի այլ  
 յերկրներում՝ մի քանի ամիսների կամ հուլիսի օրաբաբերի  
 ընթացում: Գերմանական հեղափոխությունը շատ ավելի  
 ուշ յեկավ— և բանից դուրս յեկավ, վոր այդ դեռ ևս պրո-

լետարական հեղափոխութիւնն չե, այլ այնպիսի հեղափոխութիւն, վորը միայն վերացրեց Վլլինեւմ II-ըղին, բայց վոչ բուրժուազիայի իշխանութիւնը: Սակայն պարզվեց, վոր նույնիսկ այդպիսի հեղափոխութիւնը Գերմանիայում, մի շարք այլ յերկրներէ հեղափոխական ցնցումներէ հետ միասին, բավական եր, վորպեսզի պրոլետարական հեղափոխութիւնը Ռուսաստանում կարողանա ժամանակ շահել ու ամբանալ իր դիրքերում:

Պարզվեց, վոր

ա) Համաշխարհային հեղափոխութեան զարգացումը սպասածից շատ ավելի դանդաղ ընթացավ:

բ) Բայց միևնույն ժամանակ պարզվեց և այն, վոր առաջին հաղթանակած պրոլետարական հեղափոխութիւնը (ՍՍՀՄ) կարող ե միայնակ դիմանալ (յեթե վորոչ չափով վայել ե այլ յերկրներէ բանվորների ոժանդակութիւնը) շատ ավելի յերկարատե ժամանակ, քան այդ թվում եր հեղափոխութեան սկզբին:

Ց. «Հաղթանակել համաշխարհային մասշտաբով լիովին ու վերջնականապես միայն Ռուսաստանում չի կարելի, այդ կարելի կը լինի միայն այն ժամանակ, յերբ գոնե բոլոր առաջադեմ յերկրներում, կամ գեթ մի քանի խոշոր առաջադեմ յերկրներում պրոլետարիատը կհաղթանակի: (Վ. Ի. Լենին, հատոր XVI, էջ 61, 1919 թ.):

«Մենք վոչ թե միայն պետութեան մեջ ենք ապրում, այլև պետութիւնների համակարգութեան մեջ, և Խորհրդային հանրապետութիւնն իր գոյութիւնը պահպանել իմպերիալիստական պետութիւնների կողքին յերկար ժամանակով՝ չի կարող: Վերջի վերջո կամ մեկը, կամ մյուսը կհաղթի»: (Վ. Ի. Լենին, հատ XVI, էջ 102, 1919):

Լենինիզմի այս հիմնական թեզիսներն ամբողջապես ճիշտ են մնում նաև այժմ: Երկանն այն ե.

Թե ինչ պետք ե հասկանալ, այնպէս ժամանակով

կամ «վերջի վերջո» բառերի տակ: Սկզբում թվում եր, թե «վերջի վերջո» այդ կը լուծվի մեկ-յերկու տարվա, կամ նույն իսկ մի քանի ամիսների ընթացքում: Սակայն անցքերի ընթացքը ցույց տվեց, վոր այդպես ելինք մտածում մենք միայն «սկիզբների սկզբում» (ընկ. Լենինի արտահայտութիւնն): 1921 թվին ընկ. Լենինն գրում եր. «բավական ե 10—20 տարվա ուղիղ հարաբերութիւններ գյուղացիութեան հետ—և ապահովված կը լինի հաղթանակը համաշխարհային մասշտաբով (նույն իսկ այն դեպքում, յեթե ձգձգվեն պրոլետարական հեղափոխութիւնները, վորոնք աճում են), հակառակ դեպքում 20—40 տարվա սպիտակ գվարդիական տերրորի տանջանք ե ըստպատում մեզ»:

Վ. Ի. Լենինի այս կարևորագույն ծրագրային հայտարարութիւններն վոչ մի բոլոր չպետք ե մոռացվեն այնպես, ինչպես և նրա հայտարարութիւնն Արևելքի դերի մասին (1923 թ.):

«Այսպիսով ներկա մոմենտում մենք կանգնած ենք այսպիսի հարցի առաջ. «մեր մանր ու մանրագույն գյուղացիական արտադրութեամբ, մեր քայքայվածութեամբ մեզ կհաջողվի արդյոք դիմանալ, մինչև վոր Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստական յերկիրներն ավարտման հասցնեն իրենց զարգացումը՝ դեպի սոցիալիզմը տանող ճանապարհով... Մեզ... Քաղաքակրթութիւնն ե պակասում, վորպեսզի անմիջապես սոցիալիզմի անցնենք, թեև անհրաժեշտ քաղաքական նախադրյալներն կան»:

1917 թվից հետո անցած տարիները և 1917-ից մինչև 1925 թվի բոլոր պերիպետիաները վորոչ տեսակետով կարելի յե «սկզբների սկիզբ» համարել: Ներկայումս համաշխարհային մասշտաբով ստեղծված դրութիւնը կարելի յե բնորոշել ընկ. Լենինի խոսքերով՝ «դրութեան յերկարատե ձգձգում, վորը վերջնականապես վճռված չե վոչ հոգուս մեկ և վոչ ել ոգուս մյուս կողմի», այժմ դրան

ավելացնելով այն, վոր ակնհայտ թեքում կա դեպի սոցիալիստական հեղափոխութեան հաղթանակը:

9. Ընդհանրապես սոցիալիզմի հաղթանակն (վոչ վերջնական հաղթանակի իմաստով) անպայման հնարավոր է մի յերկրում: Բանավիճելով ընկ. Տրոցկու հետ համաշխարհային Միացյալ Նահանգների հարցի շուրջն, ընկ. Լենինը դեռևս 1915 թ. գրում էր. «Համաշխարհային Միացյալ Նահանգների լոզունգը, վորպես ինքնուրույն լոզունգ, դժվար թե ուղիղ լիներ, նախ այն պատճառով, վոր նա նույնանում է սոցիալիզմին. յերկրորդ, այն պատճառով, վոր նա կարող էր ծնեցնել սխալ դատողութիւնն այն մասին, թե սոցիալիզմն անկարող է հաղթանակել մի յերկրում, ինչպես և այդպիսի յերկրի վերաբերմունքի մասին՝ դեպի մնացած յերկրները»:

«Տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափութիւնը կապիտալիզմի բացարձակ որենքն է: Սրանից հետևում է, վոր հնարավոր է սոցիալիզմի հաղթանակը նախ սակավաթիվ, կամ նույնիսկ մի առանձին կապիտալիստական յերկրում: Այդ յերկրի հաղթանակած պրոլետարիատը, եքսպրոպրիացիայի յենթարկելով կապիտալիստներին և իր յերկրում սոցիալիստական արդյունագործութիւն ստեղծելով, մնացած կապիտալիստական աշխարհի դեմ կկանգնի, իր կողմը գրավելով այլ յերկրների ճնշված դասակարգերին, այդ յերկրներում ապստամբութիւններ բարձրացնելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտութեան դեպքում նույնիսկ զինված ուժով յելնելով շահագործող դասակարգերի և նրանց պետութիւնների դեմ»: («Հոսանքի դեմ»):

Մյուս կողմից, յերկու ուղղակի հակադիր հասարակական սխտեմների գոյութիւնը կապիտալիստական ողակման, տնտեսական ճնշման այլ ձևերի, զինված միջամտութեան (ինտերվենցիա), հնի վերականգնման (ռեստա-

վրացիա) մշտական սպառնալիք է ստեղծում: Հետևապես սոցիալիզմի վերջնական հաղթուրացն միակ ապահովութիւնը, այսինքն հնի վերականգնումից ապահով լինելու միջոցը, հաղթական սոցիալիստական հեղափոխութիւնն է մի շարք յերկրներում:

Այստեղից ամենին չի բխում, վոր անկարելի յե լիակատար սոցիալիստական հասարակութիւն կառուցել այնպիսի հետամնաց յերկրում, վորպիսին Ռուսաստանն է, առանց տեխնիկա-տնտեսական տեսակետից ավելի զարգացած յերկրների «պետական ոգնութեան» (Տրոցկի): Պերմանենտ հեղափոխութեան տրոցկիական թեորիալի բաղկացուցիչ մասն է այն պնդումը, թե սոցիալիստական տնտեսութեան իսկական բարձրացումը Ռուսաստանում հնարավոր կը դառնա միայն Յեվրոպայի կարեորագոյն յերկրներում պրոլետարիատի հաղթանակից հետո» (Տրոցկի, 1922 թ). մի պնդում, վոր ՍԽՂ պրոլետարիատին ներկա շրջանում ֆատալիստական կրավորականութեան է դատապարտում: Նման «թեորիաների» դեմ ընկեր Լենինը գրում էր. «Անսահմանորեն շարուն է նրանց այն փատարկումը, վոր նրանք անգիր են արել Արևմտյան Յեվրոպայի սոցիալ-դեմոկրատիայի զարգացման ժամանակ և վորի միտքն այն է, թե մենք դեռ ևս սոցիալիզմի համար հասունացած չենք, վոր մենք չունենք, ինչպես նրանց շարքերին պատկանող զանազան «գիտնական» պարուններ են արտահայտվում, որ յեկտիվ նախադրյալներ սոցիալիզմի համար»: («Դիտողութիւններ Սուխանովի մասին»):

Անհրաժեշտ է հիշել ընկ. Լենինի ծրագրային բնույթ կրող հայտարարութիւնը, վոր նա արել է կոոպերացիայի մասին գրած իր վերջին հոդվածում, վորը ներկա պայմանները համար հատուկ նշանակութիւն ունի և վորի մեջ ասված է. «Յեվ իրոք. «Յերբ արտադրութեան բոլոր յտոյր միջոցները պետութեան ձեռքում են, յերբ պե-

տության իշխանութիւնը պրոլետարիատի ձեռքին ե, յերբ այդ պրոլետարիատի և բազմամիլիոն մանր ու մանրագույն գյուղացիները միջև դաշինք ե կնքված, յերբ այդ պրոլետարիատի ղեկավարութիւնը գյուղացիութեան նկատմամբ ապահովված ե և այլն— միթե սա այն ամենը չե, ինչ վոր հարկավոր ե վորպեսզի կոոպերացիայից.— միմիայն կոոպերացիայից,— վորը մենք առաջ արհամարում եյինք, չարչիական ձեռնարկում համարելով այն, և վորը վորոշ չափով իրավունք ունենք արհամարելու նաև այժմ, նեպի ժամանակ,— միթե դա այն ամենը չե, վոր անհրաժեշտ ե լիակատար սոցիալիստական հասարակութիւն ստեղծելու համար: Դա դեռ սոցիալիստական հասարակութիւն չե, սակայն սակայն բոլորն ե, վոր անհրաժեշտ ե և բավական՝ սոցիալիստական հասարակութիւն ստեղծելու համար: Յես պատրաստ եմ ասել, վոր ծանրութեան կենտրոնը մեզ համար անցնում ե կուլտուրական աշխարհին,— յեթե չլինեյին միջազգային հարաբերութիւնները, չլինեք մեր պարտականութիւնը՝ պայքարելու հանուն մեր բռնած դիրքի միջազգային մասշտաբով»:

Սրանց հետևում ե, վոր բանվորական դիկտատուրայի յերկիրը, վորը հիմնական բազան ե միջազգային հեղափոխութեան, պետք ե նայի իր վրա վորպես այդ հեղափոխութեան ամենագորեղ լծակի ու ոժանդակիչի վրա, մյուս կողմից այդ յերկրում տիրող պրոլետարիատի կուսակցութիւնը պետք ե թափի իր բոլոր ջանքերը, վորպեսզի կառուցի սոցիալիզմը, համոզված լինելով, վոր այդ շինարարութիւնը կարող ե լինել և անշուշտ կլինի հաղթանական, յեթե հաջողի պաշտպանել յերկիրը հնի վերականգնման (ռեստավրացիայի) ամեն տեսակի փորձերից: Այլ խոսքերով ասած՝ ինչպես գյուղացիութեան վերաբերմամբ յերկրի ներսում, այնպես ել միջազգային հարաբերութիւնների խնդրում ուղիղ քաղաքականութիւն վարելով, Ռեկ պետք ե հաղթահարի համաշխարհային հեղափոխութեան թափի դանդաղումից բղխող բոլոր դժվարութիւնները:

10. Արդեն 1920 թվին ընկ. Լենինը խոսում եր այն մասին, վոր «այժմ մենք հարկադրված ենք խոսելու վոչ թե միայն մի հանգստյան շրջանի (передышка) մասին, այլ ավելի յերկարատե ժամանակվա համար նոր շինարարութիւն անելու լուրջ շտնսերի մասին»: Բայց ավելի ուշ, 1921 և 1923 թթ., ընկ. Լենինը շարունակում ե մեր դրութիւնը «հանգստյան շրջան» համարել:

Այս հանգիստը յերբեք չպետք ե համարել թուլցիկ, «կարճժամանակյա» (բիվուկային): «ՍՍՀ Միութեան պրոլետարիատը Ռեկի ղեկավարութեամբ պետք ե համարձակ ու վճռական կերպով կառուցի սոցիալիզմն այժմ իսկ, հիշելով, վոր մեր հեղափոխութիւնը ինքը մի մասն ե համաշխարհային հեղափոխութեան, և վոր մեր հաջողութիւնը սոցիալիստական տնտեսութիւն ստեղծելու գործում ինքնին արդեն մի խոշորագույն ֆակտորն ե համաշխարային պրոլետարական հեղափոխութեան աճման»:

11. Անցած ութ տարիների ընթացքում (1917—1925 թթ.) կոմինտերնի կուտակած պատմական փորձը ցույց ե տալիս, վոր վոչ թե միայն համաշխարհային հեղափոխութեան աճման թափի ու ժամկետների, այլ և նրա մարտուսի հարցը փոքր ինչ այլ կերպ ե լուծվում, քան թվում եր հեղափոխութեան սկզբին: Ստեղծված համաշխարհային բայաններում ավելի կամ պակաս չափով հավանական ե դառնում՝ վոր հեղափոխութեան զարգացումն ամենամերձավոր ժամանակներում կարող ե անցնել և՛ Անգլիայով, և՛ հեռավոր Արևելքով, և՛ Բալկաններով և Յեվրոպայի Հարավ Արևելքով:

Հեղափոխութեան արիքն այժմ իջած ե Գերմանիայում (1923 թ. համեմատութեամբ), բայց հեղափոխական սիտուացիան աճում ե այնպիսի յերկրում, վորպիսին Անգլիան ե:

Ազգային ազատագրական շարժումներն աճում և ծավալվում են:

Այս բոլորն ունին հսկայակոն համաշխարհային նշանակութիւն:

12 Անգլիայում նշմարվող կարեւորագուցն հեղափոխական պրոցեսներն առանձնապէս մեծ կարևորութիւն են հաղորդում ՍԽՀՄ և անգլիական արհմիութիւնների մերձեցման փորձերին: Մեր արհմիութիւնները պատվիրակութիւնը Լոնդոնի վերջին խորհրդակցութեան ժամանակ միանգամայն ուղիղ վարվեց, յերբ համաձայնութեան գալու նպատակով յուր զիջումներ արեց անգլիական տրեյդունիոններին: Սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, վոր Ամստերտամյան ինտերնացիոնալի մեջ մտնող տարրերի հետ կնքած վորսէ համաձայնութիւն փորքը իշատե հաստատուն կարող է լինել միայն այն դեպքում, յեթե գոյութիւն ունի մասսաները համապատասխան ճշումը: Արհմիութիւնների միջազգային միասնականութեան նրկատմամբ Կոմիտեերնի բռնած դիժը լիովին արդարացված է: Այդ գծով տարվող աշխատանքը պետք է ընդարձակել և զարգացնել:

Միևնույն ժամանակ ուսուական արհմիութիւնները լիովին զիտակցում են, վոր Պրոֆիտերնը անպայման պետք է պահպանել և ուժեղացնել, վորպես համաշխարհային արհշարժման հեղափոխական տարրերի կազմակերպութիւն, մինչև վոր միջազգային մասշտաբով կապահովվի արհշարժման միասնականութիւնը:

13. Կոմիտեերնի քաղաքականութեան հարցի շուրջը մեր և տրոցկիզմի միջև ծագած գործնական տարաձայնութիւնն ամենեին այն չեր, թե միջազգային հեղափոխութեան թափը գանդաղում է թե վոչ: Կոմիտեերնի III-րդ Համաշխարհային կոնգրեսից սկսած և Կոմիտեերնի գործկումը, և՛ Ռ. Կ. Կ. Կենտկոմն արդեն պարզ կերպով տեսնում էին, վոր դանդաղումը փաստ է: Տրոցկիզմի հետ վիճում էինք և վիճում ենք այն հարցի մասին, թե

ինչ գործելակերպ պէտք է ունենա Կոմունիստական ինտերնացիոնալը համաշխարհային հեղափոխութեան յաւնուադած զարգացման շրջանում:

Ընկ. Տրոցկու կողմից անգլո-ամերիկյան մերձեցմանը տված չափազանցում և սխալ գնահատութիւնը նրան (ընկ. Տրոցկուն) ընդհուպ մոտեցնում էր իմպերիալիզմի լենինյան թեորիայի (ուլտրա-իմպերիալիզմի հարց) արմատական վերաքննութեան անհրաժեշտութեանը: Յե՛վ միևնույն ժամանակ ընկ. ընկ. Տրոցկին ու Ռադեկը և նրանց ամենամտիկ համախոհներն ամբողջապէս պաշտպանում էին Բրանդերի իմքակի գործելակերպը 1923 թվին— մի խմբակ, վորը փորձում էր միասնական ճակատի տակտիկան մեկնաբանել վորպես սոցիալ-դեմոկրատները հետ կոալիցիա կազմելու տակտիկա: Ահա վասիկ այն իսկական տարաձայնութիւնը, վոր գոյութիւն ունի Կոմիտեերնի Գործկումի լենինյան գծի և արոցկիզմի միջև:

14. Վորոշ վերապահումներով ու սահմանափակումներով կարելի յե վորոշ զուգահեռական դիժ անցկացնել այն խնդիրները միջև, վոր կանգնած են Կոմիտեերնի առաջ այժմ և այն խնդիրները միջև, վոր կանգնած էին ուսու բոյլշևիկները առաջ յերկու հեղափոխութիւնների, որինակ 1905 և 1917 թ. թ. միջև ընկած ժամանակա միջոցում:

Այստեղից է ծագում դեպի բոյլշևիկացում գիժը, որին (բոյլշևիկացմանը) զուգակցում է լիկվիդատորական տրամադրութիւնների (Չեխո-Սլովակիայի Կոմկուսի աջ թեր), ինչպէս և ծայրահեղ ձախ թերութեան գիժ մղվող պայքարը:

15. Կոմիտեերնին սպասում է առանձնապէս ծանր, բարդ և պատասխանատու աշխատանքի մի շրջան:

Ռեկ կխնդիրն այն է լինելու, վոր այս շրջանում ամենաուժեղ ոգնութիւնը ցույց տա Կոմունիստական

ինտերնացիոնալին, «այժմ մեռելաթաղ անելու» (ПОХО-  
РОНОЕ) տրամադրությունների դեմ կովելով նույն յե-  
ռանդով և ուժգնությամբ, վորպիսի յեռանդով և ուժգ-  
նությամբ իր ժամանակ բոլորեցին եր կովում լիկվի-  
դատորության դեմ:

16. Ստեղծված միջազգային դրության հետևան-  
քով մեր կուսակցությանը տվյալ շրջանում կարող է  
սպառնալ յերկու վտանգ. ա) թեքում դեպի կրավորակա-  
նությունը, վորը (թեքում) բղխում է տեղ-տեղ նկատ-  
վող կապիտալիզմի կայունացման և միջազգային հեղափո-  
խության դանդաղած թափի ընդհարձակիչ մեկնաբանու-  
թյունից, բացակայումը գոհացուցիչ չափերի հասնող մը-  
դումի դեպի ՍՍՀՄ սոցիալիստական հասարակություն  
կառուցելու յեռանդագին և սխտեմատիկ աշխատանքը,  
չընայած միջազգային հեղափոխության դանդաղացած  
թափին և

բ) թեքում դեպի ազգային սահմանափակություն,  
մոռացումը միջազգային պրոլետարական հեղափոխական-  
ների պարտականությունների անգիտակցական արհամար-  
հանք դեպի այն խնդիրը, վոր ՍՍՀՄ բախտը մեծ չափով  
կախված է թեկուզ և դանդաղ զարգացող միջազգային  
պրոլետարական հեղափոխությունից, — չըմբռնելն այն  
բանի, վոր վոչ թե միայն միջազգային շարժումն է աշխարհի  
առաջին պրոլետարական կետության զորության գոյու-  
թյուն ունենալուն, ամբանալուն և ուժեղանալուն կարոտ,  
այլև ՍՍՀՄ հաստատված պրոլետարիատի զիկտատուրան  
և միջազգային պրոլետարիատի ոգնությանը կարոտ:

Ռկկ պետք է տեսնի թե մեկ և թե մյուս վտանգը  
և վճռականապես պայքարի այդ յերկու հնարավոր թե-  
քումների դեմ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0179718

ԳԻՆՆ Ե 25 ԿՈՊ.

13-58